

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր»
ՓԲԸ

Էլեկտրամատակարարման Ջուսալիուբյան ծրագիր
110կՎ Լալվար և Նոյեմբերյան օդային գծերի
փոխարինում

Իրականացման Պատրաստ
Բնապահպանական Կառավարման Պլան

ԳԼԽԱԿՈՐ ՏՆՕՐԵՆ



ԱՐԹՈՒԵՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործվող հապավումներ.....	4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ /ՆԱԽԱԳԾԻ/ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	6
3. Օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակ	9
3.1. Ազգային օրենսդրություն	9
3.2. ՕԳ-երի շինարարական աշխատանքների մեկնարկի համար անհրաժեշտ թույլտվությունները և համաձայնությունները	12
3.3. Միջազգային համաձայնագրեր	12
3.4. Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականությունները.....	14
3.5. Վարչական շրջանակ	17
3.6. ՀՀ օրենքների և ՀԲ գործառնական քաղաքականությունների միջև՝ բնապահպանական փաստաթղթերի կազմման առումով հիմնական տարբերությունները.....	21
4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	22
4.1. Տեղագրությունը.....	22
4.2. Օդերևութաբանություն և կլիմա	23
4.3. Երկրաբանություն և երկրաշարժեր	24
4.3.1. Տարածքի երկրաբանական և տեկտոնային նկարագրությունը ..24	
4.3.2. Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները.....25	
4.3.3. Տարածքի սեյսմիկ-տեկտոնական պայմանները.....26	
4.4. Հողեր.....	26
4.5. Ջրային ռեսուրսներ.....	27
4.6. Բուսական և կենդանական աշխարհ.....	28
4.7. Անտառներ	29
4.8. Լանդշաֆտ	30
4.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	31
4.10. Սոցիալտնտեսական պայմանները	31
4.10.1. Բնակչությունն ուսումնասիրվող տարածքում	31
4.10.2. Գենդերային ասպեկտներ.....	31
4.10.3. Հողի օգտագործման օրինակները և գյուղատնտեսությունը	32
4.10.4. Կենսամակարդակ	35

4.11. Պատմական և Մշակութային վայրեր.....	35
5.Տեղեկատվության հրապարակում, խորհրդատվություն և մասնակցություն գործընթացին	36
6. Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան	37
6.1. Կարողությունների զարգացում.....	38
6.1.2. Աշխատանքների Իրականացման Խորհրդատուն	38
6.1.3. Շինարարության Կապալառու	40
6.1.4. Ենթակապալառու.....	42
6.2. Հաշվետվություն.....	42
6.3. Վերապատրաստում.....	43
6.4. ՇՄՍԿՊ-ի իրականացման ծախսերը	44
6.5. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցությունները և մեղմող միջոցառումները 46	
6.6. Մոնիթորինգի պլան.....	58
7. Հղումներ	63
Հավելված Ա. ՕԳ միջանցքում և շինհրապարակներում իրականացված կենսաբազմազանության հետազոտության հաշվետվություն	77
ՀԱՎԵԼՎԱԾ Բ – Հանրային լսումների արդյունքները.....	87

Օգտագործվող հասպավումներ

ՊԱԱՀ	Պողպատով ամրանավորված ալյումինե հաղորդալար
ԱՀ	Անկյունային հենարան
ԴԲ	Դեցիբել
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի սոցիալական ազդեցության գնահատում
ՇՄՍԿՊ	Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան
ԷՄՀԾ	Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր
ԱԱՇՄԿՀ	Առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի կառավարման համակարգ
ԲԷՑ	«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
ՈԻՃՊՄՀ	Ոչ իոնացման ճառագայթումից պաշտպանության միջազգային հանձնաժողով
ԿՎ	Կիլովոլտ
ՄՎ	Մեգավատ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՕՄԱՃ	Օպտիկական մանրաթելով ամպրոպապաշտպան ճոպան
ՕԳ	Օդային Էլեկտրահաղորդման գիծ
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԳ	Անվտանգության գոտի
ՎՔՇ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային Բանկն աջակցում է Հայաստանի Կառավարությանը ընթացքի մեջ գտնվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում էլեկտրահաղորդման ցանցերի հզորացմանը: Այս ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությունը մտադիր է վերակառուցել/փոխարինել գործող Լալվար և Նոյեմբերյան էլեկտրահաղորդման օղային գծերը /ՕԳ/:

ԷՄՀԾ շրջանակներում, ԲԷՑ-ն իրականացնում է Հրագրանի ՋԷԿ-ի ենթակայանից մինչև Շինուհայրի ենթակայան 220կՎ օղային գծի տեղադրումը:

ԷՄՀԾ ներքո կան խնայողություններ, որոնք Կառավարությունը մտադիր է օգտագործել փոխարինելու 110կՎ Նոյեմբերյան ՕԳ-ն Ալավերդի քաղաքում գտնվող «Ալավերդի-2» 220/110/35կՎ ենթակայանից մինչև Տավուշի մարզի Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» 110/35կՎ ենթակայանը և 110կՎ «Լալվար» ՕԳ-ն, որը սկսում է 220/110/35կՎ «Ալավերդի-2» ենթակայանից և հասնում է մինչև 110/35կՎ «Նոյեմբերյան» ենթակայան՝ ունենալով Դ-աձև ճյուղավորում դեպի «Սաղախլո» ենթակայան (Վրաստան):

Այս ՕԳ-երը էլեկտրաէներգիա են մատակարարում Հայաստանի հյուսիս-արևելյան մասում գտնվող մեծաթիվ սպառողների: Վերը նշված գործող ՕԳ-երը մոտավորապես 50 տարվա են և զգալի կերպով քայքայված, ինչպես հաստատվել է մետաղական նմուշների փորձարկումների արդյունքներից: Սա վտանգում է տարածաշրջանում էլեկտրամատակարարման անվտանգությունը և հուսալիությունը:

Հաշվի են առնվել ծրագրման չորս այլընտրանքներ՝ հիմնվելով շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության և հարկադիր վերաբնակեցման ծավալների վրա:

Սույն ԲԿՊ-ն մշակվել է ՇՄՍԱԳ հաշվետվության հիման վրա, որը մշակվել է նույն թիմի կողմից: ՇՄՍԱԳ հաշվետվությունը, ինչպես նաև սույն ԲԿՊ-ն հիմնված են ՕԳ մանրակրկիտ նախագծման վրա և ընդգրկում են բոլոր անհրաժեշտ մանրամասները, որոնք անհրաժեշտ են ֆիզիկական աշխատանքների ուղղորդման, ինչպես նաև դրանց բնապահպանական ազդեցության վերահսկման համար:

ԲԿՊ-ի նպատակն է խուսափել և նվազագույնին հասցնել բացասական բնապահպանական և սոցիալական, ինչպես նաև այդ միջանցքում գտնվող հնագիտական/պատմական եւ մշակութային ռեսուրսների վրա ազդեցությունները, որոնք առաջանում են Լալվար և Նոյեմբերյան 110կՎ ՕԳ-երի շինարարական աշխատանքների և շահագործման արդյունքում: ԲԿՊ-ն պարունակում է մեղմող

միջոցառումներ ինչպես տեղանքի, այնպես էլ գործողությունների համար: Բացի այդ, այստեղ ներկայացված են նաև մոնիթորինգի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն նախաշինարարական, շինարարական աշխատանքների, և շահագործման փուլերի ընթացքում: Շինարարական փուլի ազդեցությունը գնահատվում է, որպես առավել նշանակալի: Սակայն այդ ազդեցությունները ժամանակավոր են լինելու և արդյունավետ կերպով կարող են կառավարվել ներկայացված մեղմող միջոցառումների միջոցով:

ԲԿՊ-ն կդառնա Կապալառուի պայմանագրային պարտավորությունների անբաժանելի մասը:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ /ՆԱԽԱԳԾԻ/ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Փոխարինման ենթակա գործող Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երին զուգահեռ /փոքրիկ բացառություններով/ 110կՎ նոր երկշղթա ՕԳ-ը մոտ 25.53կմ երկարությամբ անցնելու է ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքում գտնվող «Ալավերդի-2» 220/110/35կՎ ենթակայանից մինչև Տավուշի մարզի Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» 110/35կՎ ենթակայանը:

Նոր ՕԳ-երն ունենալու են նոր հենարաններ և դրանց համար նախատեսված հիմքեր, նոր ՊԱԱՀ-եր (պողպատով ամրանավորված այլումինե հաղորդալար), նոր օպտիկական մանրաթելով ամպրոպապաշտպան ճոպան /ՕՄԱՃ/, հողակցում յուրաքանչյուր հենարանի տեղում, և «Ալավերդի-2» ենթակայանի միջոցով նոր կապ Ազգային Էներգահամակարգի հետ, նոր միացություններ Հաղթանակ համայնքում գտնվող 110/35կՎ «Նոյեմբերյան» բաշխիչ ենթակայանի հետ, և նոր հիմնական ՕԳ-ից Դ-աձև միացություններ «Ախթալա» ենթակայանի և «Մատուռ» ենթակայանի համար:

Նոր ՕԳ-ը պետք է կառուցվի նոր միջանցքում (50մ լայնությամբ), որոշ մասերում առկա միջանցքից մոտ 50մ-ով շեղումներով, որը պահանջվում է բնակավայրերից և զգայուն բնական ռեցեպտորներից խուսափելու համար: Էլեկտրահաղորդման գիծն ունի կիրճերի վրայով անցնող մի քանի մեծ թռիչքներ: Նոր հենարանների մեծ մասի տեղակայման վայրերն ունեն մոտեցման ճանապարհներ: Հողի օտարում նախատեսվում է նոր հենարանների տեղակայման վայրում, ինչպես նաև «Նոյեմբերյան» ենթակայանի ընդլայնման շինարարական աշխատանքների իրականացման և հնարավոր նոր մոտեցման ճանապարհների կառուցման համար:


Երբ նոր գիծը շահագործման մեջ դրվի, գոյություն ունեցող 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երը պետք է ամբողջովին ապամոնտաժվեն: Դրա համար

պատասխանատու է լինելու ԲԷՑ-ը, ով կֆինանսավորի այդ ապամոնտաժումը սեփական միջոցներով:

Ըստ ԲԷՑ-ի, գոյություն ունեցող գծերի անջատման կարիք շինարարության ընթացքում չի լինի: Հետևաբար շինարարության ընթացքում հոսանքազրկում չի նախատեսվում:

110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի ուղեգծի միջանցքը ցույց է տրված Քարտեզ 1.1-ում:

Քարտեզ 2.1. Ուղեգծի միջանցքը



3. Օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակ

3.1. Ազգային օրենսդրություն

Սահմանադրություն

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12 Հոդվածի (ընդունված է 1995թ. -ին և փոփոխված է 2005 և 2015թթ. -ներին) «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»: Սահմանադրության 85 Հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք»:

Սկսած 1991թից, ընդունվել են ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, ինչպես նաև մի շարք ենթաօրենսդրական և նորմատիվային ակտեր շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ:

Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը: Այն տարածքները, որոնք օգտագործվում են երկաթուղու, կամուրջների և թունելների համար, ինչպես նաև հարակից անօտարելի տարածքները, համարվում են երթևեկության նպատակով օգտագործվող հողատարածքներ: Օրենքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

Ջրային օրենսգիրք (2002)

Սույն օրենսգրքի նպատակը ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

Ընդերքի օրենսգիրք (2011)

Սույն օրենսգրքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Աշխատանքային օրենսգիրք

ՀՀ Սույն օրենսգիրքը (09.11.2004) կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Գործատուի և աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքի համաձայն կազմված պայմանագրի միջոցով և այլ աշխատանքային օրենսդրական նորմատիվային իրավական ակտերի միջոցով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության օրենք (2014)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, այդ թվում՝ անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

Համաձայն սույն օրենքի, գործողությունները դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիաների: Կատեգորիաները սահմանվում են հիմնվելով գործունեության ծավալի, բնույթի և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակի վրա:

Ընթացակարգի ծավալը և բարդության աստիճանը կախված են նախատեսվող գործունեության դասակարգից:

Ըստ Օրենքի՝ 110կՎ և ավելի բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի կառուցումը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեություն, որը պահանջում է նախնական գնահատման հայտի պատրաստում և ներկայացում (հայտ):

Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին օրենք (1998)

Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին օրենքն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 11 նոյեմբերի 1998 թ.-ին: Այն իրավական և քաղաքական հիմք է հանդիսանում Հայաստանի մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման համար:

Ըստ սույն օրենքի Հոդված 22-ի հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Բուսական աշխարհի մասին օրենք (1999)

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված

պահպանության, պաշտպանության, օգտագործման եւ վերարտադրության բնագավառում:

Կենդանական աշխարհի մասին օրենք (2000)

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության եւ օգտագործման պետական քաղաքականությունը:

Թափոնների մասին օրենք (2004)

Սույն օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման եւ դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաեւ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության

կանխարգելման իրավական եւ տնտեսական հիմքերը:

Բնապահպանական վերահսկողության մասին (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Հայաստանի Հանրապետության օրենքը բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Հայաստանի Հանրապետությունում կա բնության հատուկ պահպանության 4 տեսակ՝ պետական արգելոցներ, ազգային պարկեր, բնության հուշարձաններ և չորրորդը լինում է երեք տարբեր տիպերի՝ միջազգային, հանրապետական եւ տեղական նշանակության:

Հայաստանի հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ (Ընդունված է ՀՀ Նախագահի կողմից, 2013թ.-ին)

ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 23-ին ընդունված Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը նպատակաուղղված է ապահովելու Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը՝

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին համահունչ: Էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում է պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ:

Սույն փաստաթղթի իրականացմամբ Հայաստանը որդեգրել է կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, որը ենթադրում է տնտեսության համընթաց զարգացում և այդ ենթատեքստում էներգետիկական, որպես կարևորագույն ոլորտ, կոչված է ապահովելու երկրի այնպիսի առաջընթաց, որը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով նախադրյալներ կստեղծի հաջորդ սերունդների կայուն զարգացման համար՝ միաժամանակ նվազեցնելով էներգիայի կորուստների մակարդակը:

3.2. ՕԳ-երի շինարարական աշխատանքների մեկնարկի համար անհրաժեշտ թույլտվությունները և համաձայնությունները

- Դրական *պետական փորձաքննական եզրակացություն*, տրված *լիազոր մարմնի* (ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ) կողմից ՕԳ կառուցման համար: Նման եզրակացություն պահանջվում է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի:
- Շինարարական աշխատանքների իրականացման վայրի համար շինարարական լիցենզիա, ներառյալ քաղաքաշինության, ինժեներական հետազոտությունների, և փորձաքննության փաստաթղթերը, որոնք պետք է ձեռք բերվեն ՇԿ կողմից
- Շինարարական ընկերությունը, որը պետք է իրականացնի շինարարական աշխատանքները, պետք է ունենա տվյալ վայրում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար համապատասխան լիցենզիա:
- Համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն շինարարության համար
- Նախքան շինարարական բետոնի մնացորդները, բեկորները, աղբը և ավելցուկ գրունտը համապատասխան աղբավայր տեղափոխելը, Շինարարության Կապալառուն պետք է նախապես ձեռք բերի տեղական / համայնքային մարմինների (սովորաբար համայնքապետարանի) համաձայնությունը դրա համար:

3.3. Միջազգային համաձայնագրեր

Վերոնշյալ օրենքներից, ռազմավարություններից, հայեցակարգերից և ազգային ծրագրերից բացի, Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ: Ստորև աղյուսակում ներկայացված է համապատասխան միջազգային կոնվենցիաների ցանկը, ինչպես նաև ՀՀ կողմից դրանց ստորագրման և վավերացման տարեթիվը:

Աղյուսակ 3.1. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական համաձայնագրերին

NN	Անվանում, ընդունման վայր և տարեթիվ	Պայմանագրի ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է ՀՀ կողմից	Մեկնաբանություն
1	Կենսաբազմազանության մասին Կոնվենցիան (Ռիո-դե-Շանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1993
2	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.),	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1993
3	Կիոտոյի արձանագրություն(Կիոտո, 1997թ.)	2005		2002	
4	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա(Ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Օրհուս, 1998)		1998		
	Թթվայնացման նվազեցման էվտրոֆիկացման և հիմնական մակարդակի օզոնի կազմավորման մասին արձանագրություն (Գոթենբուրգ, 1999)		1999		
5	ՄԱԿ-ի ԵՏՀ Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա (Էսպոո, փետրվարի 25, 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1997
	Ռազմավարական բնապահպանական գնահատման մասին արձանագրություն (Կիև, մայիսի 21, 2003թ.)		2003		
6	ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի մասին, կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1997

NN	Անվանում, ընդունման վայր և տարեթիվ	Պայմանագիրը ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է ՀՀ կողմից	Մեկնաբանություն
7	Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին կոնվենցիա (Բազել, մարտի 22, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1999
8	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիենա, մարտի 22, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1999
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում, 1999
9	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.)	2001	1998	2001	
10	ՄԱԿ-ի ԵՏՀ Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին կոնվենցիա (Յելսինկի, 1992թ.)	1996	1999		
	Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999թ.)		1999		

3.4. Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականությունները

Համաշխարհային բանկի թիվ 4.01 «Բնապահպանական գնահատում» գործառնական քաղաքականությունը դիտարկվում է որպես բանկի բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունների համապարփակ փաստաթուղթ: Այս քաղաքականությունները կարևորվում են բնապահպանական և սոցիալական հնարավոր անբարենպաստ հետևանքների բացահայտման, նվազեցման և պատշաճ մեղմացման տեսանկյունից: Այս քաղաքականություններին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծրագրի նախապատրաստման և հաստատման ժամանակ: Բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունները և դրանցից յուրաքանչյուրի կիրառումը հարուցող գործոնները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 3.2.ՀԲ անվտանգության քաղաքականություններ

Գործառնական քաղաքականություն	Գործոններ	Կարգավիճակ
Բնապահպանական գնահատում (OP 4.01)	Ծրագիրն իր ազդակիր տարածքում կարող է ունենալ հնարավոր (անբարենպաստ) բնապահպանական ռիսկեր և ազդեցություններ:	Այո
Անտառներ (OP 4.36)	Անտառային ոլորտի գործունեություն կամ Բանկի կողմից ֆինանսավորվող այլ միջամտություններ, որոնք կարող են զգալիորեն ազդել անտառածածկ տարածքների վրա:	Այո
Հարկադիր վերաբնակեցում (OP 4.12)	Ֆիզիկական վերաբնակեցում և հողի կորուստ, որը բերում է՝ (i) տեղահանմանը կամ բնակության վայրի կորուստին, (ii) գույքի կամ դրա մատչելիության կորուստին, (iii) եկամուտի աղբյուրների կորուստին՝ անկախ ազդակիր մարդկանց վերաբնակեցնելու անհրաժեշտությունից:	Այո
Տեղաբնիկներ (OP 4.10)	Ծրագրի ազդակիր տարածքում տեղաբնիկների առկայության, դրանց վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության կամ տեղաբնիկներին որպես ծրագրի շահառուներ դիտարկելու դեպքում:	Ոչ
Ամբարտակ անվտանգություն (OP 4.37)	Եթե ծրագիրը ներառում է մեծ (ամբարտակի բարձրությունը 15մ և ավելի) կամ բարձր ռիսկայնություն ունեցող ջրամբարի կառուցում, եթե ծրագիրն առնչվում է արդեն իսկ գոյություն ունեցող կամ կառուցվող ջրամբարներին:	Ոչ
Վնասատուների կառավարում (OP 4.09)	Եթե ծրագիրը ներառում է թունաքիմիկատների գնում, եթե ծրագիրը կարող է ազդել վնասատուների կառավարման վրա, այնպես, որ կարող է հասցվել վնաս, նույնիսկ եթե թունաքիմիկատներ չեն ձեռք բերվելու: Այս քաղաքականությունը ներառում է այն ծրագրերը, որոնք կարող են. (i) բերել թունաքիմիկատների կիրառման զգալի աճին, դրանով իսկ բարձրացնելով առողջապահական և բնապահպանական ռիսկը, (ii) պահպանել կամ նպաստել վնասատուների դեմ պայքարի կիրառվող անկայուն և վնասատուների դեմ ինտեգրացված	Ոչ

Գործառնական քաղաքականություն	Գործոններ	Կարգավիճակ
	պայքարի մոտեցումներին չհամապատասխանող գործունեության տարածմանը, և/կամ ներկայացնել զգալի բնապահպանական և սոցիալական ռիսկեր:	
Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ (OP 4.11)	Քաղաքականությունը կիրառվում է այն դեպքերում, երբ ծրագիրը ներառում է, առաջին հայացքից, մշակութային արժեքներին վնաս հասցնելու ռիսկ (օրինակ՝ եթե ծրագիրը ներառում է լայնամասշտաբ հողային աշխատանքներ, հողի տեղափոխում, մակերեսի փոփոխություն կամ քանդում):	Այո
Բնական բնադրավայրեր (OP 4.04)	Քաղաքականությունը կիրառվում է ցանկացած ծրագրի դեպքում, երբ կարող է զգալի վնաս հասցվել բնական միջավայրին՝ ուղղակիորեն (շինարարություն) կամ անուղղակիորեն (ծրագրի իրականացմամբ պայմանավորված այլ գործունեության արդյունքում):	Այո
Վիճելի տարածքներում իրականացվող ծրագրեր (OP 7.60)	Քաղաքականությունը կիրառվում է այն դեպքում, երբ նախատեսվող ծրագիրն իրականացվում է «վիճելի տարածքում»:	Ոչ
Միջազգային ջրհոսքների վրա իրականացվող ծրագրեր (OP 7.50)	Եթե ծրագիրն իրականացվում է միջազգային ջրհոսքի վրա, ինչպիսին է ցանկացած գետ, ջրանցք, լիճ, կամ այլ ջրային մարմին, որը սահման է հանդիսանում երկու պետությունների միջև, կամ մակերևութային ջրային մարմին, որը ներհոսում է մի երկրի տարածք մյուսից (կամ ցանկացած վտակ կամ այլ մակերևութային ջրային մարմին, որը հանդիսանում է միջազգային ջրհոսքի մաս), ցանկացած ծովածոց, նեղուց, ջրանցք, որը սահմանակցում է երկու և ավել պետություններին, կամ մի պետության տարածքում գտնվելու դեպքում դիտարկվում է որպես ծովը այլ պետության հետ կապող անհրաժեշտ ջրանցք, և ցանկացած գետ, որը ներհոսում է նման ջրային մարմին:	Ոչ

Նախագիծը դասակարգվել է, որպես Բնապահպանական «Բ» կատեգորիա, համաձայն Համաշխարհային բանկի OP/BP 4.01-ի:

3.5. Վարչական շրջանակ

Այս բաժնում ներկայացված են բոլոր վարչական մարմինները, որոնք ընգրկված են ծրագրի իրականացման գործընթացում, ինչպես նաև ամփոփված են նրանց դերը և պարտականությունները առաջնահերթ՝ բայց ոչ միայն բնապահպանական շրջանակներում: Ավելի մանրամասն տեղեկություններ կարողությունների զարգացման և վերապատրաստումների մասին ներկայացված են սույն հաշվետվության Բաժին 6-ում:

Իրականացնող գործակալություն (ԻԳ)

ԲԷՑ-ը՝ իրականացնող գործակալությունն է և պատասխանատու է Ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունների, ներառյալ բնապահպանական և սոցիալական ազգային օրենսդրության պահանջների և Համաշխարհային Բանկի երաշխիքների ապահովման գործառնական քաղաքականությունների համապատասխանությունը ապահովելու համար:

Մասնավորապես ԻԳ-ն, պատասխանատու կլինի ամբողջ ծրագրի իրականացման մոնիթորինգի և ՀԲ-ին հաշվետվություն ներկայացնելու համար, ինչպես նաև կունենա հետյալ, բայց ոչ սահմանափակվող այսքանով, պարտավորությունները՝

- i. Ապահովել, որպեսզի Բնապահպանական Կառավարման Պլանի բոլոր համապատասխան պահանջները (ներառյալ շրջակա միջավայրի պահպանության և ազդեցության մեղմող միջոցառումները) պատշաճորեն ներառվեն նախագծի մրցութային փաստաթղթերի մեջ:
- ii. Ապահովել, որպեսզի բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, ձեռք բերվեն ՇԿ կողմից նախքան նախագծի շինարարական աշխատանքների մեկնարկը:
- iii. Ապահովել, որպեսզի ՇԿ-ն շինարարական աշատանքների ժամանակ հստակորեն հասկանա իր պարտականությունները կապված այդ աշխատանքների հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրների մեղմման միջոցառումների հետ և իր անձնակազմի վերապատրաստում ԲԿՊ իրականացման համար:
- iv. Կապալառուի կողմից իրականացվող ԲԿՊ-ի վերահսկողություն:

Շինարարության Կապալառու (ՇԿ)

Շինարարության Կապալառուն անկախ ընկերություն է, որը պատասխանատու է ՕԳ-երի նախագծման և կառուցման համար:

Նախագծի նախապատրաստական և կառուցման բոլոր փուլերում ՇԿ-ն պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, ներառյալ բայց չսահմանափակվելով հետևյալ պարտավորություններով՝

- կիրառվող օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների իրականացում,
- անհրաժեշտ թույլտվությունների և/կամ համաձայնագրերի ձեռք բերում,
- շինարարության ազդեցությունները մեղմող միջոցառումների իրականացում ,
- շինարարության ընթացքում մոնիթորինգի իրականացում,
- բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի հետ համապատասխանության ապահովում,
- անվտանգության և առողջության պահանջների իրականացում:

Կառավարական մարմիններ

Սույն բաժնում հակիրճ ամփոփված են բնապահպանական և մի շարք այլ տեսանկյուններից, ծրագրի իրականացմանը հնարավոր առնչություն ունեցող պետական մարմինների գործառնությունները:

Բնապահպանության նախարարություն

Բնապահպանության նախարարությունը (ԲՆ) պատասխանատու է ՀՀ-ում բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերականգնման, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար: Նշված ոլորտներում, ԲՆ-ի լիազորություններն ընդգրկում են. ազգային քաղաքականության մշակման վերահսկումը, բնապահպանական ստանդարտների և ուղեցույցերի մշակումը և կիրառումը: ԲՆ-ն իրականացնում է այս ֆունկցիաները հետևյալ ստորաբաժանումների միջոցով.

- Շրջակա միջավայրի պահպանության վարչություն
- Բնապահպանական ռազմավարական ծրագրի մոնիթորինգի վարչություն
- Իրավաբանական վարչություն
- Տեղեկատվական և հասարակայնության հետ կապերի վարչություն
- Ֆինանսա-տնտեսական վարչություն
- Ստորգետնյա ռեսուրսների և ընդերքի պահպանության վարչություն
- Միջազգային համագործակցության վարչություն:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը իրագործում է մի շարք այլ գործառնություններ՝ իր ենթակայության տակ գտնվող հետևյալ կառույցների միջոցով.

Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ՋՌԿԳ-ն կառույց է, որը զբաղվում է ջրային ռեսուրսների կառավարմամբ. Ջրի Ազգային քաղաքականության և Ազգային պլանի մշակում, ջրային ռեսուրսների դասակարգում՝ ըստ նշանակության, մասնակցություն ջրային ռեսուրսների ստանդարտների մշակման գործընթացում և դրանց կիրառման վերահսկողություն, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում և այլն: ՖՎ կայանքի շահագործման համար առաջնահերթ անհրաժեշտ է ձեռք բերել Ջրային Համակարգի Օգտագործման թույլտվություն այդ Գործակալությունից:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ (իրականացնում է բնապահպանական գնահատում, եզրակացության տրամադրում)
- Բնապահպանական պետական տեսչություն (ընդգրկում է 11 Տարածաշրջանային Բնապահպանական տեսչություն, վերահսկում է բնական ռեսուրսների պահպանման, օգտագործման և ռեգեներացման օրենսդիր և կանոնակարգիչ ստանդարտների իրականացումը: Այն նաև իրականացնում է բնապահպանական ստուգումներ աշխատավայրերում՝ վերահսկելու համար բնապահպանական միջոցառումների իրականացումը և անհրաժեշտ թույլտվությունների առկայությունը): ՕԳ-երի կառուցման և շահագործման ընթացքում, բնապահպանական օրենսդրության պահանջների իրականացումը պետք է վերահսկվի Բնապահպանական Պետական Տեսչության Տավուշ և Լոռի ստորաբաժանումների կողմից:

- Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն (հավաքագրում է ջրի որակի մասին տեղեկություն 131 նմուշառման կետերից, ներառյալ Դեբետ գետի ավազանը, որը գտնվում է ՕԳ-երի տարածքի հարևանությամբ):

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը գործադիր իշխանության պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառում: Նախարարությունը նույնպես պատասխանատու է բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության համար և իր գործունեությունն է իրականացնում հետևյալ կառույցների միջոցով.

- Ընդերքի տրամադրման գործակալություն
- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն
- Էներգետիկայի պետական տեսչություն – տրամադրում է կայանքի գործարկման եզրակացությունը
- Ընդերքի պետական տեսչություն
- Ջրային տնտեսության պետական կոմիտե

Առողջապահության նախարարություն

Առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը պատասխանատու է առողջությանն առնչվող բոլոր խնդիրների համակարգման (ներառյալ աղմուկը և ցնցումները/վիբրացիան) և կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից իրականացվող սանիտարական նորմերի, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցների վերահսկողության իրականացման համար:

ԱՆ-ն ունի հետևյալ առանձին ստորաբաժանումները եւ պետական գործակալությունները՝

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն
- Մոր եւ մանկան առողջության պահպանման բաժին
- Իրավաբանական վարչություն
- Դեղորայքի եւ բժշկական տեխնոլոգիաների քաղաքականության վարչություն
- Լիցենզավորման գործակալություն
- Ազգային Առողջապահության տեսչություն

Մշակույթի նախարարություն

Մշակույթի նախարարությունը՝ պետական գործադիր մարմին է, որը մշակում է մշակույթի ոլորտում Հայաստանի Կառավարության քաղաքականությունը: Նախարարության նպատակը մշակույթային ժառանգության պահպանումը և համալրումը, ինչպես նաև ժամանակակից արվեստի խրախուսումը և զարգացումն է:

Մշակույթի նախարարությունն ունի հետևյալ պետական գործակալությունները՝

- (i) Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն, որը ծառայություններ է մատուցում պատմական և մշակույթային հուշարձանների պահպանության, դրանց և հատուկ պահպանվող տարածքների օգտագործման ոլորտում՝ պետական գրանցում, փորձաքննություն, պահպանում, վերանորոգում,

վերականգնում, օգտագործում և այլն:

- (ii) Մշակութային ժառանգության պահպանության գործակալությունը ծառայություններ է մատուցում մշակութային ժառանգության պահպանման ոլորտում՝ մշակութային արժեքների ապօրինի արտահանման, ապօրինի ներմուծման եւ սեփականություն հանդիսացող մշակութային արժեքների ապօրինի տեղափոխման հետ առնչվող հարցերի կարգավորում:

Գյուղատնտեսության նախարարություն

Գյուղատնտեսության նախարարությունը պետական գործադիր մարմին է, որը մշակում է իրականացնում է ՀՀ կառավարության գյուղատնտեսության եւ անտառների ոլորտում կառավարման քաղաքականությունը:

- (iii) «Հայանտառ» ՊՈԱԿ-ը պետական սեփականություն հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է, որը պատասխանատու է հայկական պետական անտառների մոնիթորինգի եւ կառավարման համար:

Աղյուսակ 2.3. Հիմնական շահագրգիռ կողմեր

No.	Շահագրգիռ կողմ	Դերը / Պարտականությունը
1	Իրականացնող գործակալություն	ԻԿ-ն պատասխանատու է ամբողջ ծրագրի իրականացման մոնիթորինգի և ՀԲ-ին հաշվետվություն ներկայացնելու համար
2	Շինարարության կապալառու	ՕԳ-ների նախագծում և կառուցում
3	Տեղական Համայնքապետարանի ղեկավար	Տրամադրել շինարարության թույլտվություն
4	Բնապահպանության նախարարություն / Բնապահպանական տեսչություն / Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն	Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն, բնապահպանական օրենսդրության պահանջների արդյունավետ իրականացման վերահսկողություն
5	Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության ենթակառուցվածքներ / Էներգետիկայի պետական տեսչություն	ՕԳ մեկնարկման եզրակացության տրամադրում
6	Առողջապահության նախարարություն / Առողջապահության ազգային տեսչություն	Բնակչության և աշխատողների առողջության պահպանում
7	Մշակույթի նախարարություն / Պատմության եւ մշակութային անշարժ հուշարձանների պահպանության գործակալություն	Ուղղորդել նախագծող թիմին, որպեսզի մշակութային ժառանգություն հանդիսացող տեղանքները շրջանցվեն
8	Գյուղատնտեսության նախարարություն	Ազդակիր անտառների վերահսկում

3.6. ՀՀ օրենքների և ՀԲ գործառնական քաղաքականությունների միջև՝ բնապահպանական փաստաթղթերի կազմման առումով հիմնական տարբերությունները

Չնայած որ ՀՀ բնապահպանական օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ՀԲ քաղաքական մոտեցումներին, այդուհանդերձ կան որոշակի տարբերություններ: Սակայն դա չի խոչընդոտում նախագծին, քանի որ այն մշակված է այնպես, որպեսզի կատարվեն և ՀՀ և ՀԲ պահանջները: Հիմնական տարբերություններն են՝

- Տեղական ՇՄԱԳ հասկացությունը դիտարկում է «բնապահպանական գնահատումը», որպես վերանայման գործընթաց, որն իրականացվում է Բնապահպանության նախարարության Բնապահպանական փորձաքննության կենտրոնի կողմից: Այդ վերանայումն իրականացվում է ստանալու համար փորձագետի եզրակացությունը, հետագա գործողությունների սահմանման համար: Սակայն ՀԲ OP/BP 4.01-ն օգտագործում է այդ տերմինը նկարագրելու համար բնապահպանական ազդեցության ուսումնասիրությունը, որն իրականացնում է նախագծի ձեռնարկողը և վերանայում է ՀԲ բանկը:
- Ազգային օրենսդրությունը չունի ԲԿՊ սահմանում և չի նախատեսում դրա մշակումը, բայց այն պահանջում է, որպեսզի ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվեն բնապահպանական ազդեցությունները մեղմող միջոցառումների ցանկը և դրանց իրականացման ընթացակարգերը:

4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն նախագծում նախատեսված ՕԳ-երն հիմնականում անցնում են Լոռու մարզով: Մարզը բոլոր կողմերից շրջապատված է խորդուբորդ լեռներով եւ կիրճերով: Այստեղ են գտնվում Փամբակ, Դեբեդ եւ Ձորագետ գետերը:

ՕԳ-երի քիչ հատվածն էլ անցնում է Տավուշի մարզով (հյուսիս-արևելյան Հայաստան), որը սահմանակից է Ադրբեջանին և Վրաստանին: Մարզի ամենամեծ գետը Աղստև գետն է իր Գետիկ, Ոսկեփառ և Սառնաջուր վտակներով:


110կՎ ՕԳ-երը սկսվելով Ալավերդի-2 ենթակայանից (964 մ ծ.մ.)՝ 25.5կմ երկարությամբ ձգվում են մինչև Նոյեմբերյան ենթակայան, որը գտնվում է Հաղթանակ գյուղում (մոտավորապես 497 մ ծ.մ.):

4.1. Տեղագրությունը

Ուսումնասիրվող ամբողջ տարածքը գտնվում է ծովի մակարդակից 500մ-ից մինչև 1,490մ բարձրության վրա: Լեռնագագաթները հասնում են 1,264մ-ից մինչև 1,911մ-ի սահմաններում: Ուսումնասիրվող տարածքի հիմնական լեռներն են՝ Սուրբլիս (1,857մ), Արջիզուլիս (1,911մ), Սանգլար (1,436մ), Մամերկ (1,264), Քարակատար (1,269մ):

Լոռու մարզը, օրոգրաֆիկ տեսակետից, տեղակայված է Փամբակ գետի ձախ ափին գտնվող Բագում լեռնաշղթայի հարավային լանջին: Բագում լեռնաշղթան դասվում է Վիրահայոց-Արցախյան լեռնային համակարգի Փոքր Կովկասի բազմաթիվ ներքին լեռնաշղթաների թվին (սփռվող, աստիճանաբար մասնատվող գոտի): Այն ունի 60 կմ երկարություն և ձգվում է Սեպասար սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթայի միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ 2800 մ է, իսկ առավելագույն բարձրությունը՝ 2992 մ (Ուրասար): Բագումի անտիկլինալը համապատասխանում է երկրաբանական կառուցվածքին: Այն բնորոշվում է աստիճանական թեքությունների սիմետրիկ կոնվեքսով: Կառուցվածքային ռելիեֆը բնորոշվում է երկրորդական անտիկլինալ (Ուրասարի, Չքնաղի), գմփեթային (Մայմեխի), սինկլինալ կամ ֆլեքսուրալ (Գարգարի) և գրաբեն- սինկլինալ (Դիլիջանի) համակարգերով:

Տավուշի մարզը տարածված է Փոքր Կովկասյան լեռնաշղթայի արտաքին գծում (Վիրահավոց, Գուգարաց և Միափոր լեռներ) և գտնվում է Հայաստանի Հանրապետության միջին խոնավության տարածքում:



Նկար 3-1: 22 ֆիզիկական քարտեզ

4.2. Օդերևութաբանություն և կլիմա

Ուսումնասիրվող տարածքի կլիման համեմատաբար խոնավ է: Տարեկան տեղումների քանակը 500-ից-800 մմ է: Լեռնալանջերում ձմեռը կարճ է և մեղմ, իսկ ամառը՝ երկար և շոգ: Ինչքան ավելի մեծ է բարձրությունը, այնքան ավելի ձյունատատ են ձմեռները, իսկ ամառները՝ ավելի արևոտ: Նախալեռներում ձյունատատ շրջանի տևողությունը հոկտեմբերից մինչև ապրիլ, իսկ լեռնամասերում՝ մինչև մայիս ամիսներն է: Չյան ծածկույթի առավելագույն բարձրությունը 10-օրյա ժամանակահատվածի համար մոտ 30 սմ է, ձյունածակույթի առկայությամբ օրերի միջին քանակը՝ 52 է: Գերիշխող քամին հարավային է, իսկ որոշ դեպքերում՝ հյուսիսային և հյուսիսարևմտյան: 0-1 մ/վ քամիների միջին տարեկան քանակը՝ 24 %:

Լոռու մարզի հյուսիս-արևելյան մասերում տեղակայված Շնողի օդերևութաբանական տվյալները նշված են

Շնող	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Միջին ջերմաստիճան, (°C)	0.7	1.9	5.1	11.0	15.7	19.2	22.7	22.5	18.0	12.3	7.1	2.7	11.6
Օդի հարաբերական խոնավություն (%)	69	69	70	69	72	68	62	63	69	73	73	70	69
Տեղումներ (մմ)	20	25	40	54	79	87	49	39	37	42	31	16	519

Աղյուսակ 3-1-ում.

Աղյուսակ 3-1: Շնող բնակավայրերի օդերևութական տվյալները

Շնող	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
Միջին ջերմաստիճան, (°C)	0.7	1.9	5.1	11.0	15.7	19.2	22.7	22.5	18.0	12.3	7.1	2.7	11.6
Օդի հարաբերական խոնավություն (%)	69	69	70	69	72	68	62	63	69	73	73	70	69
Տեղումներ (մմ)	20	25	40	54	79	87	49	39	37	42	31	16	519

4.3. Երկրաբանություն և երկրաշարժեր

4.3.1. Տարածքի երկրաբանական և տեկտոնային նկարագրությունը

Ուսումնասիրվող տարածքների երկրաբանական կառուցվածքում կան միջին տարիքի Սպիտակ Յուրայի հրաբխածին նստվածքային լեռնատեսակներ, որոնք ներկայացված են պորֆիրիտներով,


տուֆային ավազաքարով և կավե թերթաքարով պատված ապառաժներով և այլ տուֆային նստվածքով, որը Դեբեդ գետի հովտում ծածկված է բազալտե լավայով, որոնք դասվում են պլիոցենի չորրորդական դարաշրջանին: Հրաբխածին նստվածքային լեռնատեսակները ենթարկվել են հիդրոջերմային և մետասոմատիկ փոփոխությունների: Շատ տարածված են բազմաթիվ դիաբազային կառուցվածք ունեցող պորֆիրիտներ: Տարածքի ինտրուզիվ մագմայական վիճակը հստակ կերպով արտահայտված է ալկալիական տիպով և ներկայացված է գրանոդիորիտ կառուցվածք ունեցող ապառաժներով, որոնց մեջ Լավար լեռնային լանջերի ինտրուզիվ վիճակն է: Միջին չորրորդական դարաշրջանին պատկանող բազալտե լավայի հոսքերը վերը նշված ապառաժի անհարթ մակերևույթի վրա են, որոնք գտնվում են շերտագրության ստատիգրաֆական անհամապատասխանության մեջ է: Այն սկսվում է Լոռիի սարահարթում և իջնում է մինչև Դեբեդ գետի հովիտը, շարունակվում է նեղ միջանցքով և հասնում մինչև Քուռ գետը: Հիմնականում, դրանք ներկայացված են երկու հոսքերով՝ վերևի և ներքևի, որոնց բնորոշող առանձնահատկությունը իրենց բաժանումն է: Սյունակային բաժանումը վերին հոսքին բնորոշող առանձնահատկությունն է, մինչ դեռ կլոր ձևով բաժանումը ներքևի հոսքի համար է: Բազալտի ամրությունը կայուն չէ և միջինը տատանվում է 20-50մ միջակայքում: Հիմնականում տարածքը ներկայացված է ապառաժներով (անդեզիտով, պորֆիրիտներով, դիորիտով) ծածկված 4-6մ դելյուվիալ և պրոլուվիալ նստվածքներով: Ուսումնասիրվող տարածքի տեկտոնային վիճակը որոշվում է Մոմիսթիի- Ղարաբաղի իր տեղանքի տեկտոնային գոտիով: Լավարի սինկլինալը (գոգաձայքը) անմիջապես կապված է ուսումնասիրվող տարածքի հետ հյուսիս- արևմուտքի կողմից, որը բաժանվում է Միջին-Վերին/Սպիտակ/Յուրայի և Էոցենի դարաշրջանների և Չատոինդաղ հակասինկլինալի հարավ-արևելյան կողմից, որոնց մեջ հայտնաբերվել է Միջին-Վերին/Սպիտակ/Յուրայի դարաշրջանները:

4.3.2. Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Ելնելով հիդրոերկրաբանական տեսանկյունից՝ ուսումնասիրվող ծրագծի տարածքը բնութագրվում է ջրերում սովորական բեկորների, ծակոտկեն ունեցող բեկորների մանրաքարերի առկայությամբ, ինչպես նաև դելյուվիալ և պրոլուվիալ գոյացություններով: ՇՄՄԳ-ի վերջնական նախագիծ 110կՎ, Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինում, Հայաստան 58 Ջրերում սովորական բեկորների, ծակոտկեն ունեցող բեկորների մանրաքարերի հիմնական մասսան պատկանում է դոլերիտ-բազալտին, պորֆիրիտներին, իրենց տուֆային ավազաքարին և նմանատիպ ապառաժներին: Ճաքելու և մանրանալու իրենց հատկությունների պատճառով այդ ապառաժները հեշտությամբ անհետանում են (հիմնականում հալվում են) մակերևութային ջրերում, որոնք գտնվելով՝ կուտակվում են հորիզոնում և հոսում են Դեբեդ գետի, նրա ջրային հոսքերի, հովիտների և այլնի ուղղությամբ: Հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են տեղանքի զարգացման համար: Նշված տեղանքներում և խորքային հորերի մինչև 6մ խորությամբ չեն հայտնաբերվել ստորգետնյա ջրեր: Դեբեդ գետի առանձին մասերում նկատվում են սահմանափակ քանակությամբ աղբյուրներ: Ջրերի դելյուվիալ և պրոլուվիալ գոյացությունները հանդիպում են լանջերի ստորոտներում աղբյուրների ձևով:

Հայաստանի երկրաբանական քարտեզը բերված է

Գծագիր 3-2-ում.



Պատկեր 3-2: Հայաստանի երկրաբանական քարտեզը

4.3.3. Տարածքի սեյսմիկ-տեկտոնական պայմանները

Տարածքի սեյսմիկ-տեկտոնական պայմանները բարենպաստ են: Դրանց գնահատման ընթացքում մեծ կարևորություն է տրվել ակտիվ տեկտոնական գոտիներին և սեյսմիկ վտանգի սկզբնական արժեքը՝ գնահատելով գրունտի պայմանները: Այս տարածքում չկան ոչ մի ակտիվ տեկտոնիկ ճաքեր: Համաձայն 02.02.2006թ-ի Հայաստանի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, տարածքը ընդգրկվել է առաջին սեյսմիկ գոտում, որտեղ սպասվող առավելագույն արագացումները լինում են 0.20g (8 բալ):

4.5. Ջրային ռեսուրսներ

Դեբեդ գետը հոսում է առաջարկվող միջանցքին զուգահեռ, և երկու անգամ կհատվի գծով: Դեբեդ գետը և նրա վտակները հիմնականում սնուցվում են անառնային ջրերով: Վարարման շրջանը տևում է մարտից մինչև հունիս ամիսները, իսկ դրան հաջորդում է կայուն և ցածր ջրի մակարդակի չոր շրջանը: Կարճատև և ինտենսիվ ջրհեղեղներ են գրանցվում սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին՝ կախված տեղումների քանակից: Ըդհանուր առմամբ, գետը բնութագրվում է որպես ինտենսիվ և բարձր վարարումներ ունեցող գետ: Մակերեսային ջրերը մաքուր են, հանքայնացումը 238-ից մինչև 599 մգ/լր սահմաններում է: Գետի ջրերն օգտագործվում են տեղի բնակչության կողմից ոռոգման նպատակով:

4.6. Բուսական և կենդանական աշխարհ

Ծրագրի տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Իջևանի բուսաբանական տարածքում և պատկանում է Կովկասյան տարածաշրջանի Suicumbolistic բուսաբանական տարածքին: Անտառները ներառում են չոր և արաքսյան կաղնիները, արևելյան հաճարենին, կովկասյան սոճին, կարմրածառը, կնձնին, վրացական կաղնին, և այլ մշտադալար ու թափվող ծառերը: Ճահճային տեղամասերը և անտառները լի են վայրի բույսերով: Տարածքում առկա են հաճարենու, լորենու, թխկենու, կնձնենու և հացենու տարբեր տեսակներ: Օժանդակ տեսակները ներկայացված են պնդուկենիով, ցախկեռասով, գերմանական մուշմուլայով, մասրենիով, մոշով, ազնվամորով, արևելյան բոխիով, իլենիով, հոնենիով և հաղարջենիով: Որոշ տարածքներ ծածկված են գետափնյա բուսականությամբ (բարդիներ, ուռենիներ և խոտանման բույսեր՝ խոնավ տարածքներում), ինչպես նաև բաց անտառային խոտհարքների բուսական համակցություններ:

Լեռնային ֆլորան ներառում է հետևյալ տեսակները. *Iris furcata*, *Anemone fasciculata*, *A. ramunculoides*, *Caltha popypetala*, *Veratium lobelianum*, *Palsatilla armena*, *Corydalis persica*, *Fritilaria caucasica*, *Betonica grandiflora*, *Prunus spinosa*, *Sedum pilosum*, *Sempervivum transcaucasicum*, *Malus orientalis*, *Pyrus caucasicus*: Գետերի կիրճերի ֆլորան ներառում է հետևյալ տեսակները. *Iris lineolata*, *I. paradoxa*, *I. caucasica*, *Allium stamineum*, *Bellevalia paradoxa*, *B. longystila*, *Datura stramonium*, *Digitalis ferruginea*, *Muscari atropatana*, *M. sosnovskyi*, *Tulipa sosnovskyi*, *Punica granatum*, *Vinca sp.*, *Vitis sylvestris*, *Ficus carica* (վայրի):


Ուսումնասիրության իրականացման շրջանում և հարող տարածքներում կան կենդանիների բազմաթիվ տեսակներ, որոնք հիմնականում բնակվում են անտառներում, դիմացկուն թփուտներում, լքված այգիներում և մեղվանոցներում: Ֆաունան ներառում է զգալի քանակությամբ վայրի անտառային կատուներ, եղեգնյա վայրի կատուներ, լուսաններ, աղվեսներ, ազնիվ եղջերուներ, եղնիկներ, կովկասյան սկյուռեր, մացառախոզեր, արջեր, վայրի խոզեր և կզաքիսներ:

Ուսումնասիրվող տարածքում հանդիպող կենդանիների և բույսերի տեսակների մասին առկա չեն գրականության մանրամասն տվյալներ: Մանրամասն տեղեկատվություն չկա թռչունների չվելու ճանապարհի մասին, բայց գիտենք, որ Հայաստանը չի ընկնում հիմնական միգրացիոն ճանապարհներից ոչ մեկի վրա, որը գտնվում է երկրի արևելքում և արևմուտքում: Այսպիսով ՕԳ-երը չեն հատում որևէ Կարևոր Թռչնային տարածք, ըստ Թռչունների Պաշտպանության Միջազգային Ասոցիացիայի:

ՕԳ-ների տեղանքի կենսաբազմազանության ուսումնասիրությունը ներկայացված է Հավելված Բ-ում:

4.7. Անտառներ

Ուսումնասիրության իրականացման տարածքը գտնվում է Անտառային Լանդշաֆտային Գոտում: հայաստանում անտառներն, ընդհանուր առմամբ, ծածկում են լեռների միջին գոտին, որոնք երկրի հյուսիսում հանդիպում են 500մ- ից մինչև 2,100մ բարձրության վրա: Հայաստանի անտառների գերակշռող մասը՝ ՇՄՍԱԳ-ի վերջնական նախագիծ 110կՎ Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինում, Հայաստան 62 լայնատերև է (97 %): Հայաստանի անտառային տարածքները բերված են Աղյուսակ 7-4-ում: Առաջարկված միջանցքի անտառապատ տարածքը ընդգրկում է հիմնականում Հաղպատից դեպի Դեբեդ գետի հատումը և հարավ դեպի Փոքր Այրում: Այս հատվածում անտառի մոտ 5.5կմ-ը հատվում է առաջարկված էլեկտրահաղորդման գծով, և կարող է պահանջվել ծառահատումներ այս անտառային տարածքում: Առաջարկված միջանցքի այս տարածքում գերակայում են կաղնու և բոխու անտառները, վրացական կաղնու հիմնական տեսակներով (*Quercus iberica*) և սովորական բոխու տեսակով (*Carpinus betulus*): Այս ծառատեսակներին ոչինչ չի սպառնում, բայց այս անտառներում հանիպող լրացուցիչ տեսակների մասին առկա չեն մանրամասն տվյալներ:



Նկար 4-4: Հայաստանի անտառները

4.8. Լանդշաֆտ

Ուսումնասիրության տարածքը գտնվում է Անտառային Լանդշաֆտային Գոտու հատվածում (տես նկար 4-5) և խիստ առանձնացված քանդակված ռելիեֆ է՝ կտրուկ լանջերով և արոտավայրերի ու գյուղատնտեսական դաշտերի ինտերվալներով: Գործող էլեկտրահաղորդման գիծը գտնվում է լեռնային սարահարթերում և գետի կիրճում/ճանապարհի երկու կողմերում՝ ունենալով բարձր տեսողական ազդեցություն: Դերեղ գետի կիրճում կան բնակավայրեր: Դերեղ գետի հովիտը շատ գեղատեսիլ է և գործող օդային գծերի առկայությունը տեսողական տհաճություն է պատճառում զբոսաշրջության տեսանկյունից: Եթե առկա 110կՎ ՕԳ-երը ապամոնտաժվեն, ապա չի լինի լրացուցիչ տհաճություն, քանի որ հենարանների քանակը մնում է նույնը:

Source: Fifth National Report to the Convention on Biological Diversity, Republic of Armenia, Yerevan 2014

Նկար 3-5: Հայաստանի լանդշաֆտային գոտիները

4.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Առաջարկված 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երը և դրանց մոտեցման ճանապարհները չեն հատի Լոռու և Տավուշի մարզերի այս պահպանվող տարածքներից որևէ մեկը կամ չեն ազդի դրանց վրա:

ՕԳ-երի շինարարությանը ավելի մոտիկ է /մոտովրապես 7 կմ/ «Զիկատար» պետական արգելավայրը: Այն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 150.0 հեկտար հողերի վրա և ընդգրկում է մարզի հյուսիս-արևմտյան մասում՝ Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան դիրքադրության լանջերի անտառային բնական էկոհամակարգերը՝ Կողբ գետի աջափնյա վտակների ավազանների վերին հատվածները:

4.10. Սոցիալափորձաբանական պայմանները

4.10.1. Բնակչությունն ուսումնասիրվող տարածքում¹

Նախատեսվող ՕԳ-երի միջանցքն անցնելու է Լոռու և Տավուշի մարզերով: Որոշ գյուղական համայնքներ, օրինակ Ակները, Հաղպատը, Նեղոցը, Փոքր Այրումը և Մեծ Այրումը գտնվում են Լոռու առաջարկվող միջանցքի մոտակայքում:

Լոռու մարզի բնակչությունը կազմում է 225,000 մարդ, տարածքը՝ 3,799 կմ², իսկ բնակչության խտությունը 1 կմ² տարածքի համար՝ 66 մարդ: Տավուշի մարզի բնակչությունը կազմում է 125.500 մարդ, տարածքը 2,704 կմ², իսկ բնակչության խտությունը 1 կմ² տարածքի համար՝ 46 մարդ:

Բնակչության մեծ մասը կենտրոնացած են քաղաքներում և գյուղերում: Նախատեսվող ուղեգծի միջանցքի մեծ մասը ամայի տարածքներ են, հիմնականում համայնքային և մասամբ սեփական հողեր են:

Գյուղատնտեսությունը հիմնականում սեփական կարիքների բավարարման համար է, իսկ ավելցուկն ուղղվում է տեղական շուկա: Հիմնական ենթակառուցվածքները արդիկանացման կարիք ունեն: Երիտասարդները գերադասում են տեղափոխվել քաղաքներ, հիմնականում Երևան կամ արտերկիր:

4.10.2. Գենդերային ասպեկտներ

Գենդերային վերլուծությունը ցույց է տալիս, որ կան հիմնական խնդիրներ՝ կապված կանանց իրավունքների ոտնահարման հետ, հատկապես դրանք վերաբերում են կանանց մասնակցությանը կյանքի բոլոր ասպեկտներում տեղի ունեցող փոփոխություններին և զարգացումներին: Օրինական կերպով երաշխավորված իրավունքների և դրանց ոչ


¹ Source: <http://www.armstat.am>

բավարար հնարավորությունների միջև գոյություն ունեցող բացը թույլ չի տալիս վերացնելու գենդերային խտրականությունը հայ հասարակության մեջ: Չնայած նրան, որ Հայաստանում կանայք ունեն կրթության բարձր մակարդակ և հավասար մասնագիտական կարողություններ, նրանց համար գոյություն ունի հնարավորությունների պակաս կիրառելու իրենց հմտությունները և կարողությունները աշխատանքի շուկայում, ինչպես նաև հասարակության մեջ: Այս իրավիճակը էլ ավելի ակտուալ է դառնում գյուղական վայրերում: Ուսումնասիրվող տեղանքում տղամարդկանց հաճախակի արտագաղթի պատճառով հաճախ են հանդիպում միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ: Կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները գործնականում հատկապես խոցելի են և կարող են ընկնել ծայրահեղ աղքատության մեջ, քանի որ կանայք մնում են միայնակ՝ կենցաղային խնդիրների և երեխաների խնամքի պատասխանատվության հետ: Տղամարդկանց արտագաղթի մեկ այլ հետևանք էլ «գուգահեռ ընտանիքների» աճն է, երբ արտագաղթած տղամարդիկ ընտանիք են կազմում իրենց նոր բնակավայրում: Սա բարձրացնում է կանանց խոցելիությունը, հատկապես, երբ տղամարդիկ վերադառնում են տուն վատառողջ կամ վարակիչ սեռական հիվանդությամբ վարակված: Հայաստանում կանաց վիճակը, հատկապես գյուղական համայնքներում, նկարագրվում է, որպես անկայուն կենսակերպ ունեցող, երբ նույնիսկ չնչին ցնցումները, փոփոխությունները, սեզոնայնությունը կարող են նպաստել ծայրահեղ խոցելի իրավիճակի ստեղծմանը, առանց հաղթահարման ռազմավարության հնարավորությունների: Բնակարանային, հողի կամ այլ գույքի կորուստը կարող են վճռական լինել այդ իրավիճակում:

4.10.3. Հողի օգտագործման օրինակները և գյուղատնտեսությունը

Համաձայն Հայաստանի 2013թ-ի Վիճակագրական տարեգրքի, ՀՀ-ն ունի մոտ 2 միլիոն հա գյուղատնտեսական նշանակության հող՝ իսկ դա նշանակում է երկրի հողային տարածքի մոտ 70 %-ը՝, արտադրելով Հայաստանի ՀՆԱ-ի 22 %: Դրանց մեծ մասը սակայն արոտավայրեր են (մոտ 1 միլիոն հա): Մշակելի հողատարածքներից 448,400 հա վարելահողեր են, 33,400 հա բազմամյա տնկարկներ, 121,600 հա այլ մշակվող հողեր, և 392,700 հա այլ հողատեսքեր (տես Նկար 7-6.)

Համաձայն ՀՀ կադաստրի պետական կոմիտեի տվյալների, մարզում մասնավոր հողերը կազմում են ամբողջ գյուղատնտեսության նշանակության հողերի 23% -ից ավելի քիչ մասը և արոտավայրերը կազմում են պետական գյուղատնտեսության նշանակության հողերի ավելի քան 70 %-ը : Սակայն վարելահողերի ավելի քան 59 %-ը մասնավոր հողեր են:



Նկար 3-6: ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողեր

Հետազոտության վայրում գյուղատնտեսությունը կենտրոնացված է գյուղերի ստորին լեռնային լանջերին: Գյուղատնտեսական գործունեությունների շրջանակը շատ տարբեր է՝ խոշոր եղջուրավոր անասուններ, ոչխարներ, խոզեր և այծեր պահելուց մինչև մշակաբույսերի, ինչպիսիք են կարտոֆիլը, լոլիկը, վարունգը և սմբուկը և հացահատիկային մշակաբույսերի, ինչպիսիք են ցորենը և լոբին, և ավելի խորը արմատներ ունեցող բույսերի աճեցում, ինչպիսիք են պտղատու ծառերը (դեղձ, խնձոր, ծիրան):

Հայ հասարակության ամենաաղքատ խավի համար գյուղատնտեսությունը եկամտի հիմնական աղբյուր և ապրուստի պահպանման միակ ռազմավարությունն է հանդիսանում: Արդյունաբերության անկման պատճառով անկախացումից հետո ավելի աճեց կախվածությունը գյուղատնտեսությունից:

Մարդկանց ապրուստի համար գյուղատնտեսության կարևորության, և հողաբաժինների մասնատվածության և փոքր չափերի պատճառով, նախատեսվող օդային գծերի տեղափոխման համար գյուղատնտեսական նշանակության հողերի օտարումը

դիտարկվում է որպես հնարավոր բացասական ազդեցության խնդիր: Առաջարկվող գծի մշանցքի մոտ 47%-ը օգտագործվում են գյուղատնտեսական նպատակով, արոտավայրերը ընդգրկում են մոտ 16%-ը, այգիները՝ մոտ 4%-ը և անտառային տարածքները՝ մոտ 23%-ը (գնահատված է՝ հիմնվելով 2010թ-ի արբանյակային լուսանկարահանման վրա):

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-ների կառուցման համար նախատեսված է 22635մ² տարածք, ներառյալ շինհրապարակները, աշտարակների հիմքերը, նոր ճանապարհները: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ հողի աղտոտում չի ակնկալվում:

Աղյուսակ 3-2: ՕԳ կառուցման համար նախատեսված հողերի բնութագրերը

Հողի կատեգորիան		Բնութագիրը	
Անուն	Քանակ	Անուն	Քանակ
Գյուղատնտեսական	98	վարելահող	74
		բերքատու և խաղողի այգիներ	7
		խոտհարքներ	3
		Արոտավայր	2
		Այլ հողատեսքեր	11
		Գյուղատնտեսական գործունեություն	1
Անտառային	14	անտառներ	13
		Այլ հողատեսքեր	0
		մացառուտ	1
Բնակավայրեր	1	Բնակելի կառույցներ	0
		Հասարակական կառույցներ	0
		Այլ հողատեսքեր	1

Նախագծի շրջանակներում հողի օտարում նախատեսվում է միայն հենարանների տեղադրման համար: Յուրաքանչյուր հենարանի համար նախատեսվում է օտարել մինչև 10X10/հող, ընդհանուր՝ 100 քմ: Հենարանների ընդհանուր քանակը 99 է, որից 2 կտեղադրվեն ենթակայանների տարածքում:

Ընդհանուր նախատեսված է օտարել 9700 մ²:

Հողի օտարումը կիրականացվի պայմանագիր կնքելով սեփականատերերի հետ, փոխադարձ համաձայնության հիման վրա: Սեփականատիրոջ կողմից անհամաձայնության դեպքում, հողի օտարումը կիրականացվի ի օգուտ հանրային շահերի: Մասնավոր հողերն օտարումից հետո եւ համայնքային հողերն օտարումից

առաջ կփոխվեն և կդառնան «Էներգետիկայի, կապի, տրանսպորտի եւ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտի» կատեգորիայի հոդեր:

4.10.4. Կենսամակարդակ

Համաձայն Լոռու մարզի սոցիալտնտեսական զարգացման Ծրագրի, Լոռու մարզի աղքատության մակարդակը բարձր է, իսկ Տավուշի մարզում ցածր է Հայաստանի միջին աղքատության մակարդակից:

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունների տեղական տնային տնտեսությունների կենսամակարդակների ուսումնասիրությունների, Լոռու մարզում պաշտոնական աղքատության մակարդակից ցածր ապրող մարդկանց տոկոսն ավելի մեծ է հանրապետության միջինից: Միջինը 35 է, իսկ Լոռու մարզում միջինը 45.4 է: Աղքատության աստիճանը Լոռու մարզում նույնպես ավելի բարձր է հանրապետության միջինից: Գյուղական համայնքներում աղքատության պատճառներն են արդյունաբերական ձեռնարկությունների պակասը, թերզարգացած ենթակառուցվածքները և հեռավորությունը բնակչության մեծ մասից:

Աղյուսակ 3-3: Լոռու և Տավուշի մարզերի հիմնական վիճակագրական տվյալները, 2015

Մարզ (Շրջան)	Գործազուրկ, % ²	Աշխատող, %	Թոշակառու, %	Ընտանիքներ, որոնք ստանում են աղքատության նպաստ
Լոռի	7.98	42.69	20.04	897
Տավուշ	6.1	44.18	17.17	418

4.11. Պատմական և Մշակութային վայրեր

Քանի որ Հայաստանի բնակչության պատմությունն սկսվում է թերևս նեոլիթյան դարաշրջանից, և տարածքը միայն դրանից հետո դարձավ կարևոր որպես բնակավայր, առևտրային և գյուղատնտեսական գոտի, առկա էին բազմաթիվ պատմական և մշակութային վայրեր: Սակայն, չկան քարտեզներ, որոնցում նշված կլինեն այդ վայրերի ճշգրիտ տեղանքները (GPS կոորդինատներ): Ինչպես նաև, գոյություն ունեցող հուշարձանների միայն մի փոքր մասն է տեսանելի և ճանաչելի հասարակությանը: Մյուսները հայտնի են միայն մի քանի տեղական փորձագետների, որոնք առնչություն ունեն ՀՀ Մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության բաժնի հետ:

Համաձայն Հայաստանի “Մշակութային և պատմական անշարժ հուշարձանների” պետական գրանցման, Լոռու մարզում կան 2460 պատմամշակութային հուշարձաններ, որոնք համարվում են պետական ունեցվածք և ենթակա չեն օտարման, և համապատասխանաբար 1680 հուշարձաններ կան Տավուշի մարզում (CE/EC 2010):

Դաշտային աշխատանքների ընթացքում, որոնք հանդիսանում են ՇՄՄԱԳ-ի մաս, հայտնաբերվել են երկու մշակութային վայրեր, որոնք գտնվում են գործող/նոր 110կՎ ՕԳ-երի միջանցքի ԱԳ-ում:

² Percentage in total population of marz

- Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան հատվածում, Բերդիկ գյուղում 12 և 13-րդ դարերի գործող մշակութային վայր (խաչքար, միջնադարյան գերեզմանոց, երկու մատուռ (աշտարակ N28)) կա, որոնք ընդգրկված են պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ցանկի մեջ:
- Նեղոց միջնադարյան գյուղը (աշտարակ N42) ներառված է Լոռու մարզի Նեղոց գյուղի պատմական և մշակութային հուշարձանների ԱՀ 10 և ԱՀ 15 ցանկի մեջ:

Պլանավորված հենարանների տեղակայման վայրերի և մոտեցման ճանապարհների վերաբերյալ ԲԷՑ-ը տվյալներ կտրամադրի Մշակույթի նախարարությանը: Անհրաժեշտության դեպքում ԲԷՑ-ը հետազայում կառաջարկի հենարանների տեղափոխում, որը պետք է հաստատվի Մշակույթի նախարարության կողմից:

5.Տեղեկատվության հրապարակում, խորհրդատվություն և մասնակցություն գործընթացին

ՇՄՍԱԳ գործընթացը ներառում է նաև ՇՄՍԱԳ թիմի հանդիպումները կառավարության համապատասխան մարմինների փորձագետների և ոլորտի մասնագետների հետ փորձով և տեղեկատվությամբ կիսվելու և խորհուրդներ ստանալու նպատակով:

Բնապահպանական և սոցիալական մասնագետները, հանդիպումներ են անցկացրել Ալավերդիում և Հաղպատում ԲԷՑ-ի, Բնապահպանության նախարարության, Մշակույթի նախարարության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև դաշտային այցելություններ են կատարել Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի առաջարկված միջանցքի տեղամասեր: Քննարկվել են բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև Հայաստանում և մասնավորապես Լոռու մարզում թափոնների ոչնչացման հնարավորությունները: Ակնկալվող աշխատանքների վերաբերյալ խորհրդակցություններ են անցկացվել ՀԿ-ների հետ: Երևանում խորհրդակցություններ են անցկացվել Մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հետ, որոնց ընթացքում քննարկվել են պատմության և մշակույթի վայրերի պահպանման ընթացակարգերը:

Նախնական ՇՄՍԱԳ հաշվետվությունը հայերեն լեզվով ներկայացվել է հանրությանը՝ շահագրգիռ կողմերին տրամադրելով 10օր ժամանակ դրանց հետ ծանոթանալու համար: Փաստաթուղթը տեղադրվել է ԲԷՑ-ի ինտերնետային կայքում և տպագրված օրինակները տրամադրվել են տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներին:

Դրա մասին ծանուցումը հրատարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, որի միջոցով հասարակությունը տեղեկացվել է հանրային լուսմների վայրի եւ ժամի մասին, ինչպես նաև, թե ինչպես պետք է ծանոթանալ փաստաթղթերի հետ:

Փաստաթղթերը հրապարակելուց հետո Ալավերդու քաղաքապետարանում, 2017թ-ի հունվարի 20-ին նախնական գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ են անցկացվել: Քննարկումները կենտրոնացված են եղել ԱԵԱ-ց համար նախնական ՇՄՍԱԳ հաշվետվության մեկնաբանման վրա: Լուսմներն անցան արդյունավետ և մասնակիցների ակտիվ

մասնակցությամբ: Ազդակիր համայնքներից Օրհուս Կենտրոն ՀԿ-ի տեղական մասնաճյուղերը ակտիվորեն մասնակցեցին քննարկումներին:

Առաջարկություններ՝ ելնելով Հանրային Քննարկումների հանդիպումներից

- Ներգրավել համայնքի ղեկավարներին նախագծային փուլում, որպեսզի ազդեցությունները հասցվեն նվազագույնի:
- Շինարարական աշխատանքները կազմակերպել այնպես, որ չխանգարեն բերքահավաքի ժամանակահատվածին:

ՇՄԱԳ փորձաքննություն իրականացնելու համար ԲԷՑ-ը ներկայացրել է ՇՄԱԳ հաշվետվությունը ԲՊՆ ՇՄԱԳ փորձաքննական կենտրոնին 2017թ-ի մարտ ամսին: ՇՄԱԳ փորձաքննական կենտրոնը, համայնքների ղեկավարների աջակցությամբ, կազմակերպեց հանրային լսումներ, որի նպատակն էր տեղեկացնել համայնքներին նախնական փորձաքննության մասին: Հանրային լսումներից հետո, 2017թ.-ի փետրվարի 21-ին, ՇՄԱԳ փորձաքննական կենտրոնը ԲԷՑ-ին ներկայացրեց N10 տեխնիկական առաջադրանքն, ամբողջական ՇՄՍԱԳ հաշվետվություն մշակելու համար:

ՇՄՍԱԳ-ի հաշվետվության վերջնական նախագիծը, ներառյալ՝ ՇՄՍԿՊ հաշվետվությունը, հայերեն և անգլերեն լեզուներով ներկայացվել են հանրությանը և շահագրգիռ կողմերին՝ 2017թ.-ին:

ՇՄՍԱԳ-ի հաշվետվության վերջնական նախագծի վերաբերյալ հանրային լսումները տեղի են ունեցել 2017թ.-ի մարտի 21-ին, Ալավերդու քաղաքապետարանում:

Մասնակիցների կողմից ներկայացված առաջարկները հիմնականում վերաբերում էին շինարարական աշխատանքներին տեղի բնակչությանը ներգրավելուն, որը կօգներ նրանց բարելավել իրենց սոցիալական պայմանները և լուծել ամենօրյա խնդիրները:

Հանրային լսումների արձանագրությունը հայերեն լեզվով, ինչպես նաև մասնակիցների ցանկը ներկայացված են Հավելվածներում:

6. Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան

ՇՄՍԿՊ-ն հանդիսանում է Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման համար փաստաթղթերի անբաժանելի մասը: ԲԷՑ-ը ընդհանուր պատասխանատվություն ՇԿ-երի ՇՄՍԿՊ-ի իրականացման համար և կարող է հզորացնել աշխատանքների բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի իր ներքին կարողությունները՝ աշխատանքների տեխնիկական վերահսկման համար բարձր որակավորմամբ խորհրդատուների ծառայություններ վարձելու միջոցով, որը կներառի շինարարական աշխատանքներ մատուցողների կողմից ՇՄՍԿՊ-ի պահանջների պահպանման վերահսկողությունը:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ փոխարինման համար առաջարկվող 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երը կարող են կառուցվել և շահագործվել առանց էկոլոգիական և սոցիալական միջավայրի վրա զգալի բացասական ազդեցությունների, եթե իրականացվեն ՇՄՍԿՊ-ում առաջարկվող բոլոր մեղմացուցիչ միջոցառումները:

6.1. Կարողությունների զարգացում

ԲԷՅ-ը, Աշխատանքների Իրականացման Խորհրդատուն, Շինարարության Կապալառուն և Ենթակապալառուները ներգրավված են լինելու նախագծի բոլոր փուլերում: Կարողությունների զարգացման նպատակն է հետևել, որպեսզի նախագծի գործունեություններն իրականացվեն համաձայն ՀԲ քաղաքականության և Հայաստանի օրենսդրության պահանջների, ինչպես նաև հետևել, որպեսզի նախագծում ընդգրկված բնապահպանական միավորների և մասնագետների պարտականությունները նույնպես ներկայացված լինեն ԲԿՊ-ում:

ԲԿՊ վերահսկողությունը, մոնիթորինգը, պարտականությունները, դերերը, առաջադրանքները եւ հաճախականությունները իրականացնում են՝

6.1.1 Իրականացնող կազմակերպություն (ԻԿ)

Մասնավորապես ԻԿ-ն, պատասխանատու կլինի ամբողջ ծրագրի իրականացման մոնիթորինգի և ՀԲ-ին հաշվետվության ներկայացման համար, ինչպես նաև կունենա հետյալ, բայց ոչ այսքանով սահմանափակվող պարտավորությունները՝

- Ապահովել, որպեսզի Բնապահպանական Կառավարման Պլանի բոլոր համապատասխան պահանջները (ներառյալ շրջակա միջավայրի պահպանության և ազդեցության մեղմող միջոցառումները) պատշաճորեն ներառվեն մրցույթային փաթեթի մեջ մեջ:
- Ապահովել, որպեսզի բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, ձեռք բերվեն ՇԿ կողմից նախքան նախագծի շինարարական աշխատանքների մեկնարկը:
- Ապահովել, որպեսզի ՇԿ-ն հստակորեն հասկանա իր պարտականությունները շինարարական աշխատանքների հետևանքով բնապահպանական խնդիրների մեղմման և իր անձնակազմի ԲԿՊ իրականացման վերապատրաստման համար:
- Մոնիթորինգ անցկացնել կապալառուի բնապահպանական և սոցիալական աշխատանքների մասով և ապահովել դրա համապատասխանությունը ՇՄՄԿՊ-ին:
- Բնապահպանական բաղադրիչի հետ կապված տեխնիկական առանձնահատկությունների և աշխատանքային ընթացակարգերի վերանայում
- իրականացնել ԲԿՊ ընդհանուր վերահսկողություն
- Տեղանքի կանոնավոր այցելություններ / աուդիտ, որի նպատակն է, ապահովել մեղմող միջոցառումների իրականացումը:
- Պատրաստել և ներկայացնել ՀԲ-ի հաստատմանը համապատասխան հաշվետվությունները/ստուգաթերթիկները՝ ԲԿՊ իրականացման համապատասխանության ստուգման համար, ինչպես նաև ծանուցել մեղմացման միջոցառումների ցանկացած անհամապատասխանության մասին:

6.1.2. Աշխատանքների Իրականացման Խորհրդատուն

(TRACTEBEL ENGINEERING S.A. Avenue Ariane 7, 1200 Brussels - BELGIUM)

Խորհրդատու կազմակերպության բնապահպանական և սոցիալական մասնագետները սերտորեն պետք է համագործակցեն ԲԷՑ-ի և Կապալառուի ինժեներական եւ տեխնիկական անձնակազմի հետ, հետևելու համար, որ նախագծի բնապահպանական պարտականություններն իրականացվեն հավուր պատշաճի: Ակնկալվում են հետևյալ հատուկ գործողությունները՝

Շինարարության ընթացքում

- Վերահսկել Առողջապահության և Անվտագության ընթացակարգերի պահպանումը շինհրապարակներում
- Ապահովել, որ ԲԿՊ դրույթները հետևողականորեն և լիովին պահպանվեն ծրագրին առնչվող բոլոր աշխատանքների ընթացքում (այդ թվում՝ օժանդակ եւ երկրորդային աշխատանքների ընթացքում, ինչպիսիք են ճանապարհները, եւ աղբահանությունը):
- Բացահայտել ԲԿՊ դրույթների հետ անհամապատասխանությունները եւ դրանց խախտումները՝
 - Վերահսկել բնապահպանական և սոցիալական համապատասխանության պայմանագրային դրույթների իրականացումը
 - Ապահովել պայմանագրի կատարումը, գտնելով և փաստաթղթավորելով անհամապատասխանության խնդիրները և պատրաստելով/նախաձեռնելով իրավական արձագանքման միջոցներ
 - Խորհրդատվություն ԲԷՑ-ին, պայմանագրին համապատասխան հարցերի շուրջ, ինչպես օրինակ իրավական պաշտպանության միջոցների պահանջում, վճարումների կատարման, երրորդ անձանց կողմից շտկման աշխատանքների նախաձեռնման համար տույժի սահմանում:

Սա կիրականացվի հետևյալ կերպ՝

- Վերահսկել Կապալառուի (և Ենթակապալառուների) աշխատանքը և ապահովել ԲԿՊ հետ համապատասխանությունը,
- Վերահսկել տեղանքի ստուգման կանոնավոր հաշվետվությունները, որոնք պետք է կազմվեն Կապալառուի կողմից,
- Ստուգել Կապալառուի ներկայացրած բնապահպանական միջադեպերի արձանագրությունները (աղտոտումներ, ազդեցություններ, օրինազանցություններ և այլն), ինչպես նաև ձեռնարկված ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումները,
- Ստուգել Կապալառուի հանրային բողոքների գրանցամատյանը, որտեղ գրանցված են բոլոր բողոքները, ինչպես նաև ձեռնարկված գործողությունները,
- Անհրաժեշտության դեպքում Կապալառուին տրամադրել ուղղիչ գործողությունների հանձնարարականներ
- Իրականացնել կանոնավոր աուդիտ, համոզվելու համար որ ԲԿՊ իրականացման համակարգն արդյունավետ է գործում:

Շինարարական փուլից հետո / Շահագործում

- Ապահովել, որ ԲԿՊ և/կամ նախագծման փաստաթղթերում նշված բարեկարգման և ռեկուլտիվացման միջոցառումները պատշաճ կերպով իրականացվեն Կապալառուի կողմից:
- Բացահայտել բոլոր բացթողումները և անհամապատասխանությունները, և անհրաժեշտության դեպքում խորհուրդ տալ ներգրավել երրորդ կողմի:

- Հետևել, որ բնապահպանական պահանջները հաշվի առվեն (նախագծի առանձին բաժինների համար) նախքան շահագործման թույլտվություն ստանալը և Կապալառուի կողմից վերջնական վճարում կատարելը
- Օգնել Պատվիրատուին ՕԳ պահպանման և սպասարկման պլաններում ընդգրկել բնապահպանական և սոցիալական մոնիթորինգը և կառավարումը:

6.1.3. Շինարարության Կապալառու

*(GarnArak industrial Co., Address: No.3, 2th Alley, Pakestan St, Beheshti Ave, Tehran- IRAN
P.O.Box: 14145/138, www.gamarak.com)*

Շինարարության Կապալառուն անկախ ընկերություն է, որը պատասխանատու է ՕԳ-երի նախագծման և կառուցման համար:

Նախագծի նախապատրաստական և կառուցման բոլոր փուլերում ՇԿ-ն պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, բայց դա չի սահմանափակվում հետևյալ պարտավորություններով`

- կիրառվող օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների իրականացում,
- անհրաժեշտ թույլտվությունների և/կամ համաձայնագրերի ձեռք բերում,
- ապահովել, որպեսզի իրականացվեն շինարարության հետևանքով առաջացած ազդեցությունները մեղմող միջոցառումները ,
- ապահովել, շինարարության ընթացքում մոնիթորինգի իրականացումը,
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի հետ համապատասխանությունը և,
- ապահովել, որպեսզի իրականացվեն անվտանգության և առողջության պահպանության պահանջները

Նախագծի հետ առնչություն ունեցող անձնակազմի դերը և պարտականությունները նկարագրված են ստորև

Ծրագրի Ընդհանուր ղեկավար

Ընդհանուր ղեկավարը պատասխանատու է ամբողջ նախագծի բնապահպանական և անվտանգության կառավարման բոլոր ասպեկտների համար: Նրա պարտականություններն են`

- ԲԿՊ և ԲԱԱ քաղաքականության ապահովում
- կորպորատիվ բնապահպանական եւ անվտանգության խնդիրների, թիրախների կամ նպատակների հաստատում եւ վերանայում
- աշխատակիցներին համապատասխան հանձնարարություններ տալ
- ապահովել, որ բնապահպանական և անվտանգության խնդիրներն ինտեգրված լինեն բիզնեսի վարման բոլոր ասպեկտներում
- Վերանայել ԲԿՊ և ԲԱԱ ծրագրի կատարումը

Նախագծի ղեկավար

Նախագծի ղեկավարը պատասխանատու է նախագծի բնապահպանական և անվտանգության բոլոր այն ասպեկտների համար, որոնք մտնում են իր պարտականությունների մեջ:

Նա պետք է ապահովի, որ՝

- Նախնական գնահատման համար դիմումի ժամանակ կազմված ԲԿՊ և ԲԱԱ պլանին հետևեն և անհրաժեշտության դեպքում բոլոր զգալի բնապահպանական, առողջության և անվտանգության ռիսկերը հայտնաբերվեն, չեզոքացվեն կամ նվազեցվեն:
- Գործունեությունները պլանավորելու եւ ժամանկացույց կազմելու միջոցով հայտնաբերվեն բնապահպանական, առողջության եւ անվտանգության ռիսկերը եւ չեզոքացվեն կամ նվազեցվեն:
- Իրականացվի նախագծի Բնապահպանական, Առողջության եւ Անվտանգության մշտադաշտման կատարման մոնիթորինգ և հաշվետվություն
- Ներգրավվեն միայն բանիմաց ենթակապալառուներ եւ աշխատակիցներ
- Նշանակվի աշխատավայրի ղեկավար, ով պատասխանատու կլինի Բնապահպանական, Առողջության եւ Անվտանգության մշտադաշտման կատարման համար
- Ենթակապալառուներն աշխատեն համաձայն իրենց գրավոր եւ հաստատված բնապահպանական եւ անվտանգ աշխատանքային մեթոդների
- Դրույթներին՝ ինչպիսիք են անվտանգության դրույթները, ՇՄԱԳ և այլ, հետևի յուրաքանչյուր աշխատող, անկախ ուղղակի կամ անուղղակի մասնակցության փաստից
- Բոլոր միջադեպերի մասին անմիջապես զեկուցվի աշխատանքների եւ անվտանգության ծառայության ղեկավարներին
- Անվտանգության թիմը աջակցություն ստանա բոլոր միջադեպերի հետաքննության հարցում
- Բոլոր աշխատավայրերում պահպանվեն բնապահպանական և անվտանգության կանոնները
- Բնապահպանական և անվտանգության վերաբերյալ հանդիպումներ իրականացվեն և դրանց համապատասխան արձանագրությունները պահպանվեն
- Աշխատանքային հրապարակում իրականացվի ռիսկերի գնահատում և դրանց արդյունքների մասին իրազեկվի աշխատող անձնակազմը

Աշխատավայրի ղեկավար / աշխատավայրի պատասխանատու

Աշխատավայրի պատասխանատու/Աշխատավայրի ղեկավարը պատասխանատու է նախագծի բնապահպանական, առողջության և անվտանգության բոլոր ասպեկտների համար և հաշվետու է նախագծի ղեկավարին: Նա պետք է ապահովի, որ՝

- ԲԿՊ և ԲԱԱ պլանն իրականացվի, մշտադիտարկվի և պահպանվի, և աշխատավայրում բոլորը հետևեն դրանց պահանջներին
- Վտանգավոր և անբարենպաստ գործունեություններն անմիջապես դադարեցվեն և վերսկսվեն միայն անվտանգ պայմաններ ապահովելուց հետո
- Կապալառուները աշխատեն համաձայն իրենց գրավոր եւ հաստատված բնապահպանական եւ անվտանգ աշխատանքային մեթոդների
- Աշխատավայրում բնապահպանության, առողջության և անվտանգության հետ առնչվող գործունեությունները լինեն կազմակերպված
- Բոլոր միջադեպերի մասին զեկուցվի, կատարվեն ուսումնասիրություններ և ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ
- Իրականացվեն տեղանքի բնապահպանական, առողջության և անվտանգության ամսեկան/շաբաթական ստուգումներ/աուդիտ և դրանց արձանագրությունները պահպանվեն

ԲԱԱ և Բնապահպանական մասնագետն ունի հետևյալ պարտականությունները, դերը և առաջադրանքները

- Կապալառուի ղեկավար թիմը, ԲԱԱ և բնապահպանական մասնագետը կանոնավոր կերպով իրականացնում են բնապահպանական միջոցառումներ և դրանց վերաբերյալ մշտադիտարկման գործողություններ
- ԲԱԱ մասնագետը վերահսկում է ԲԿՊ-ի իրականացումը;
- ԲԱԱ և Բնապահպանական մասնագետը իրականացնում է տեղանքի ամսեկան այցելություններ և ստուգում
- Կազմակերպել բնապահպանական և անվտանգության վերապատրաստման դասընթացներ աշխատողների համար
- Բնապահպանական մասնագետը փաստաթղթավորում է մոնիթորինգի արդյունքները բնապահպանական հաշվետվության ձևով
- Մոնիթորինգի ոչ համապատասխան արդյունքների դեպքում, բնապահպանական մասնագետը նախաձեռնում է ուղղիչ գործողություններ և հետևում է դրանց կատարմանը
- Թույլատրել տեղանքի բնապահպանական մոնիթորինգ կամ ստուգում իրականացնել ցանկացած ժամանակ
- Ցանկացած պատահարի դեպքում (հրդեհ, պայթյուն, նավթի արտահոսք եւ այլն), կապալառուն պետք է զեկուցի աշխատանքների իրականացման խորհրդատուին, առաջին զեկույցը պետք է լինի բանավոր, բայց դրան պետք է հետևի գրավոր զեկույցը՝ պատահարից հետո 24 ժամվա ընթացքում:
- Աշխատանքների ավարտին, բոլոր օգտագործված տարածքները անհրաժեշտ է վերականգնել և բերել իր նախկին տեսքին: Դա պետք է հաստատվի աշխատանքների իրականացման խորհրդատուի կողմից:

6.1.4. Ենթակապալառու

(REDINET CJSC. Address: No.24/7-24/8, Azatutyun Ave. YEREVAN, 0014, Armenia, www.redinet.am)

“Ռեդինետ” ՓԲԸ ինժեներական և տեխնիկական մասնագետները սերտորեն կհամագործակցեն Խորհրդատուի, ԲԷՑ-ի և Կապալառուի բնապահպանական և սոցիալական մասնագետների հետ, ապահովելու համար ԲԿՊ սպառիչ, գործնական և արդյունավետ իրականացումը:

6.2. Հաշվետվություն

Շրջակա միջավայրի պահպանման պահանջների համապատասխանության վերաբերյալ պետք է պարբերաբար զեկուցել նախագծի իրականացման բոլոր փուլերում:

Ամսեկան Բնապահպանական և անվտանգության հաշվետվությունները Կապալառուի կողմից պետք է ներկայացվեն ԻԱԽ: Հաշվետվության մեջ պետք է նկարագրվի բնապահպանական մոնիթորինգը և դրա արդյունքները: Ամսեկան հաշվետվության մեջ պետք է ներկայացվի

անկանոնության, անհամապատասխանության և այլ հանդիպած խնդիրների վերաբերյալ բացատրություն:

Հաշվետվությունները պետք է համալիր կերպով ներառեն բնապահպանական պահանջներին և կանոնակարգերին ԲԿՊ համապատասխանության համար իրականացվող մեղմող միջոցառումների բոլոր համապատասխան ասպեկտները, ինչպիսիք են վերապատրաստումը, թույլտվությունները, արտոնագրերը, եւ այլն, որոնք ձեռք են բերվել հաշվետվության մշակման ընթացքում:

6.3. Վերապատրաստում

ՇԿ բնապահպանական և սոցիալական մասնագետները ԱԻԽ անձնակազմի անմիջական վերահսկողության ներքո կիրականացնեն վերապատրաստման դասընթացներ ՇԿ և ԵԿ համապատասխան անձնակազմի համար, որպեսզի ԲՍԿՊ բոլոր միջոցառումները շինարարության և շահագործման փուլերում կատարվեն համապատասխան կերպով:

ՇԿ անձնակազմի վերապատրաստումը պարտադիր է: Վերապատրաստումը կենտրոնացված է լինելու ՀԲ անվտանգության քաղաքականության պատշաճ կիրառման վրա, ինչպես նաև կներառի մեղմող և մշտադիտարկման միջոցառումների իրականացումը:

Շինարարության և շահագործման ընթացքում աշխատող ամբողջ անձնակազմը կվերապատրաստվի հետևյալ կերպ՝

- աշխատանքի հատուկ դերը և ընթացակարգերը,
- մասնագիտական անվտանգություն և առողջություն,
- չնախատեսված գործողությունները և արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացները

Վերապատրաստումը կներառի՝

- նոր աշխատողների վերապատրաստում,
- մասնագետների վերապատրաստում (ինչպես պահանջված է իրենց աշխատանքի համար), և
- Վերապատրաստում, ըստ պահանջի

Նախագծի ղեկավարը պետք է ապահովի, որ

- Թիմի բոլոր անդամներն ունենան համապատասխան գիտելիքներ Բնապահպանական, Առողջության և Անվտանգության պարտավորությունները կատարելու համար
- Նախագծի ենթակապալառուները ունենան համապատասխան գիտելիքներ և ունենան անհրաժեշտ ռեսուրսներ, ինչպես նաև բավարար չափի բնապահպանական և անվտանգության տեղեկատվություն
- Նախագծի համար աշխատող ամբողջ աշխատակազմի (ներառյալ ենթակապալառուները) համար պետք է կանոնավոր կերպով կազմակերպվեն համապատասխան բնապահպանական և անվտանգության վերապատրաստման դասընթացներ և նրանք պետք է պատշաճ կերպով կատարեն կանոնները:

- Ոչ ԲԷՑ-ի և ոչ էլ կապալառուի աշխատողները չեն կարող աշխատել տեղանքում, եթե նրանք չեն մասնակցել Բնապահպանության և անվտանգության վերապատրաստման դասընթացին կամ հրահանգավորմանը
- Բոլոր աշխատողներն իրագեկ են ԲԿՊ, ՀԱԱ ձեռնարկի մասին, եւ հետևում են դրա բոլոր պայմաններին
- Էլետրականության հետ առնչվող բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն միայն համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից

Նոր աշխատողների վերապատրաստում՝

Ոչ ԲԷՑ-ի և ոչ էլ կապալառուի աշխատողները չեն կարող աշխատել տեղանքում, եթե նրանք չեն մասնակցել Բնապահպանության և անվտանգության վերապատրաստման դասընթացին կամ հրահանգավորմանը, որը անց է կացվել Անվտանգության աշխատակցի / Նախագծի ղեկավարի եւ բնապահպանական մասնագետի կողմից:

Նոր աշխատողների վերապատրաստման բնապահպանական և անվտանգության դասընթացները պետք է ներառեն՝

- Անվտանգության պահանջները և կարևորությունը
- ԲԷՑ-ի և կապալառուների/եթե այդպիսիք կան, առողջության և անվտանգության քաղաքականությունը
 - Էլեկտրատեխնիկական անվտանգություն
 - Աշխատանքային համակարգի թույլտվություն
 - Հրդեհի մարման հիմնական վերապատրաստում
 - Առաջին օգնության հիմնական կանոններ
 - Անհետաձգելի բուժօգնության կանոններ
 - Արտակարգ իրավիճակներում տարհանման ընթացակարգերը
 - Թափոնների կառավարում
 - Տեղանքի վայրի կենդանական աշխարհի պահպանում
 - Բերրի հողի պատշաճ հանում և տեղափոխում և պահեստավորում
 - Օդի աղտոտման և փոշու վերահսկում
 - Աղմուկի և վիբրացիայի վերահսկում
 - Հնարավոր հնագիտական առարկաների բացահայտում և պատահական գտածոյի դեպքում ձեռնարկվող ընթացակարգ

6.4. ՇՄՄԿՊ-ի իրականացման ծախսերը

110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի Ծրագրի շինարարության փուլում ազդեցությունների մեղմացման ծախսերի մեծ մասը ներառված է շինարարության ընթացիկ ծախսերում:

Շրջակա միջավայրի ազդեցության հետ կապված լրացուցիչ ծախսերը կապված են վերականգնման միջոցառումների և մոնիթորինգի իրականացման հետ: Լրացուցիչ ծախսեր նախատեսված են Պատմության և մշակույթի հուշարձանների լրացուցիչ մոնիթորինգի, ինչպես նաև ԲԷՑ-ի անձնակազմի ուսուցման համար, քանի որ շիանարարական տարածքների

եռամսյակային վերահսկողությունը պետք է իրականացվի միջազգային փորձառությամբ աուդիտորի կողմից:

Ծախսերը վնասված անտառների վերականգնման և ծառատունկի համար այն անտառային տարածքներում, որտեղ ծառեր կհատվեն, կորոշվեն հենարանների տեղակայման վայրերի վերջնական որոշումից հետո:

Հաշվի առնելով մոտ 356 օր տևողությամբ շինարարության փուլը՝ ՇՄՄԳՊ-ի իրականացման ծախսերը նախնական կերպով գնահատվել են 180,400 ԱՄՆ դոլար (տես Աղյուսակ 6-1):

Աղյուսակ 5.1. Մեղացուցիչ միջոցառումների, մոնիթորինգի և ուսուցման ծախսերը

	Փուլ	Խնդիր	Արժեք [ԱՄՆ դոլար]
Մեղմացում	Մինչև շինարարությունը սկսելը	Թռչունների և չղջիկների վերաբերյալ հետազոտություն ԱԳ-ի երկայնքով	20,000
Մեղմացում	Շինարարություն	Թռչունների անվտանգության հարմարանքների տեղադրում ամպրոպապաշտպան ճոպանների վրա, եթե գիծը անցնում է ձորի վրայով*	45,000
Մեղմացում	Շինարարություն, EHS	Կառավարման պլանի համաձայն (աղյուսակ 6-4)	14,000
Մեղմացում	Շինարարություն	Շինարարական տարածքների եռամսյակային վերահսկողություն	60,000 (15,000 յուր առաքելությունը)
Ուսուցում	Շինարարություն	ԲԷՑ-ի և ՇԿ անձնակազմի ուսուցում	25,000
Գումար			164,000
10 % չնախատեսված ծախսեր			16,400
Ընդամենը			180,400

* Ենթադրվում է, որ ՇԿ-ն ունի գծային մեքենա տեղադրման աշխատանքներ իրականացնելու համար

6.5. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցությունները և մեղմող միջոցառումները

Աղյուսակ 5.2. ԲԿՊ. Հնարավոր ազդեցությունների և մեղմող միջոցառումների ամփոփագիր. Նախագծման և նախապատրաստման փուլ

Ազդակիր Բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Հող և քայքայում (Էրոզիա)	ՕԳ միջանցք	Հստակ սահմանագատել(օրինակ ցանկապատել)բոլոր տարածքները նախքան շինարարությունն սկսելը	ՇԿ , ԻԱԽ,
		Օգտվել առկա ճանապարհներից/արահետներից որքանով հնարավոր է, չվնասելու համար հողածածկը	ՇԿ , ՆԿ,
	Ճամբարներ և հենարաններ	Ճամբարների և հենարանների տեղը ընտրել այնպես, որ հնարավոր չափով նվազեցնել անհրաժեշտ հողի մակերեսը	ՇԿ , ՆԿ,
		Նվազեցնել հողի բերրի շերտի հեռացումը բոլոր շինհրապարակներում և միջանցքներում	ՇԿ ,
Հող և քայքայում (Էրոզիա)	ՕԳ միջանցք	Հստակ սահմանագատել(օրինակ ցանկապատել)բոլոր տարածքները նախքան շինարարությունն սկսելը	ՇԿ , ԻԱԽ,
		Օգտվել առկա ճանապարհներից/արահետներից որքանով հնարավոր է, չվնասելու համար հողածածկը	ՇԿ , ՆԿ,
	Ճամբարներ և հենարաններ	Ճամբարների և հենարանների տեղը ընտրել այնպես, որ հնարավոր չափով նվազեցնել անհրաժեշտ հողի մակերեսը	ՇԿ , ՆԿ,
		Նվազեցնել հողի բերրի շերտի հեռացումը բոլոր շինհրապարակներում և միջանցքներում	ՇԿ
Կենդանական և բուսական աշխարհ	ՕԳ միջանցք	Տարածքում պետք է անցկացվի կենսաբազմազանության ուսումնասիրություն	ՇԿ , ՆԿ,
		Բացառել ընտրված տեղամասերում կենդանիների միգրացիոն ուղիների առկայությունը	ՇԿ
Աշխատանք ային անվտանգություն	Ճամբարներ, շինարարական հրապարակներ, նոր ճանապարհներ	ԱԱԲ քաղաքականության ներդրում շինարարական փուլի և շինարարական աշխատանքների ընթացքում: Համոզվել, որ բոլոր աշխատողները ունեն առողջապահական ապահովագրություն Ուսուցանել ոլորտի աշխատողներին հետևյալ բնապահպանական կառավարման ոլորտներում՝ ա) Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ շինարարական աշխատողների համար՝ վտանգավոր քիմիական նյութերի արտահոսքի կանխման, ջրային ռեսուրսների աղտոտման (մակերեսային և ստորգետնյա), օդի աղտոտման և աղբի վերահսկման	ՇԿ , ՆԿ,

Ազդակիր բաղադրիչը /Շնկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Աշխատանք ային անվտանգ- ություն	Ճամբարներ, շինարա- րական հրապարակ- ներ, նոր ճա- նապարհներ	բ) հնագիտական գտածոների հայտնաբերման վերաբերյալ, Ծրագրի ղեկավարը պետք է համոզված լինի, որ Կապալառուի անձնակազմը վերապատրաստված է և ունի բավարարա գիտեիքներ տրված առաջադրանքը պատշաճ կատարելու համար Շինարարական սարքավորումների (ինչպիսիք են էքսկավատորները, ամբարձիչները և այլն) օպերատորները պետք է համապատասխան վերապատրաստում անցած լինեն և կարողանան պատշաճ կերպով արձագանքել իրենց առաջադրանքի իրականացման ժամանակ առաջացող վտանգին Ոչ մի օպերատորի չի թույլատրվի աշխատել սարքավորումների հետ, եթե նա չի մասնակցել Կապալառուի ԲԱԱ մասնագետի և նախագծի ղեկավարի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին Անձնակազմը պետք է սովորի, թե ինչպես գերծ մնալ հողի և ջրային ռեսուրսների անտեղի ատոտումից, ինչպես նաև պետք է մասնակցի անվտանգության դասընթացներին	
Պատմական վայրեր և հուշարձան- ներ	Գծանշված հատվածներ	Տեղեկացնել Մշակույթի նախարարության պատմամշակութային արժեքների պաշտպանության գործակալությանը կառուցվող հենարանների կամ մոտեցման ճանապարհների մասին	ՇԿ , ՆԿ
Մոտակա ցյուղեր	Ճանապարհ- ներ և տարածքներ	Օգտագործել նախագգուշացնող նշաններ հիմնական ճանապարհների, ցյուղերի կամ այլ բնակավայրերի մոտ	ՇԿ , ՆԿ

Աղյուսակ 5.3. ԲԿՊ. Հնարավոր ազդեցությունների և մեղմող միջոցառումների ամփոփագիր.
Շինարարության փուլ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Կենդանական և բուսական աշխարհ	ՕԳ միջանցք Միջին	Անտառային տարածքներում ձվադրման/բազմացման սեզոնի ընթացքում (մարտ-հունիս) խուսափել շինարարական աշխատանքներից	ՇԿ
	Միջին	Կանխել ցածրադիր հատվածների ծառերի հատումը	ՇԿ, ՆԿ
	Ցածր	Շինարարական աշխատանքների ժամանակ խուսափել միջանցքի լրիվ մաքրումից	ՇԿ
	Միջին	Շինարարության տարածքներին մոտ տեղակայված մեծ ծառերի պաշտպանություն փայտե պատնեշների միջոցով, չնախատեսված ոչնչացումից խուսափելու նպատակով	ՇԿ
		Արգելվում է մուտքը դեպի անտառ՝ բույսերի հավաքումը և որսորդությունը:	ՇԿ
		Կատարել ճշգրիտ գրառումներ բոլոր հատված ծառերի վերաբերյալ	ՇԿ
		Նվազեցնել հենարանների տեղակայման վայրերում օգտագործվող տարածքների մակերեսը հողի բերրի շերտի տարհանումը նվազեցնելու համար	ՇԿ
	ՕԳ միջանցք		Պահպանել մեծ ծառերի արմատները ծանր մեքենաներից կամ պեղումներից
Ցածր		Այն աշտարակների տարածք, որոնք չունեն մոտեցման ճանապարհներ, հնարավորության դեպքում պետք է հասնել միջանցքով, նվազեցնելու համար ծառահատումը բարձրադիր վայրերում	ՇԿ
Միջին		Հաղորդալարերի վրա տեղադրել թռչունների համար նախատեսված հստակ երևացող անվտանգության հարմարանքներ	ՇԿ , ՆԿ, ԻԱԽ
		Ծանր տեխնիկայի աշխատանքը իրականացնել ձվադրման շրջանից դուրս	
Շին.հրապարակներ		Շինարարության տարածքներին մոտ տեղակայված մեծ ծառերի պաշտպանություն փայտե պատնեշների միջոցով, չնախատեսված ոչնչացումից խուսափելու նպատակով	ՇԿ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Կենդանակա ն և բուսական աշխարհ	Միջին	Խախտված տարածքներում նոր ծառեր տնկել, մոտեցման ճանապարհներին, աշխատողների ճամբարի տեղանքում վերականգնել տեղանքին հատուկ բույսերը և ծառատեսակները (համաձայն ազգային օրենսդրության, 1 հատած ծառի փոխարեն տնկել 2 նորը)	ՇԿ Հայաստան՝ ՓԲԸ
Հող և քայքայում (Էրոզիա)	Մոտակա փողոցներ	Նոր մոտոցման ճանապարհների տեղանքի զգուշորեն ընտրությունը (եթե կա անհրաժեշտություն)	ՇԿ, ՆԿ, ԻԱԽ ՇԿ, ՆԿ, ԻԱԽ
	Ցածր	Շինարարական աշխատանքներից հետո Նոր մոտեցման ճանապարհների վերականգնման անհրաժեշտություն չի առաժանա	ՇԿ
	Միջին	Իրականացնել ջրահեռացման միջոցառումների վերահսկում (ջրթող առուներ, պատնեշներ եւ այլն) մշտական ճանապարհների վրա, եթե դրանք գտնվում են լանջերի մոտ կամ էրոզիայի վտանգ պարունակող տարածքներում	ՇԿ, ՆԿ, ԻԱԽ
Հող և քայքայում(Էր ոզիա)	Շինհրապար ակներ,աշտա րակներ	Արտահոսքերի պատճառով հավելյալ վնասից խուսափելու համար կառուցել շրջանցող առուներ	ՇԿ , ՆԿ,
	Միջին	Ավելցուկային գրունտը եւ հողը կպահվեն ծածկի տակ և կօգտագործվեն ռեկուլտիվացման նպատակով	ՇԿ
	Ցածր	Անձրևային եղանակների պատճառով լանդշաֆտին հասցվախ վնասը շինարարական աշխատանքներից հետո հնարավորինս շուտ վերականգնել	ՇԿ
	Ցածր	Նվազագույնի հասցնել ճանապարհից դուրս մեքենաների և սարքավորումների կիրառումը	ՇԿ
	Ցածր	Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շինարարական տեխնիկայի և այլ մեքենաների պարբերական տեխնիկական սպասարկում	ՇԿ
	Միջին	Հենարանների մոնտաժման աշխատանքներն ավարտելուց հետո հողի վերին շերտը բերել իր սկզբնական վիճակին	ՇԿ
	Ցածր	Շինանյութը պահել ցեմենտի կամ այլ բեռնարկղերում թափվելուց զերծ մնալու համար	ՇԿ , ՆԿ
	Ճանապար- հներ, շինհրա- պարակներ	Անհրաժեշտության դեպքում կատարել ջրցան Ջերծ մնալ հանքավայրերի լանջերի աղբակույտեր կազմակերպելուց	ՇԿ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
	Առափնյա տարածքներ Միջին	Մինչ շինարարության ավարտը Վերանորոգել յուրաքանչյուր վնաս հասցված առափնյա տարածքները՝ այդ թվում գետափնյա և գետային (եթե այդպիսիք կան)	ՇԿ , ՆԿ
		Զերծ մնալ գետերի և ջրանցքների մոտ աղբի կուտակումներից	ՇԿ
	ՕԳ միջանցք	Կառուցվող հենարաններից հեռավորությունը մինչ առափնյա տարածքներ պահել 100 մ (առնվազն 50մ)	ՇԿ
Զրային ռեսուրսներ	Շինհրապարակներ, աշտարակներ Ցածր	Բորոր հեղուկ նյութերը (օր.վառելիքի,շարժիչի յուղը և այլն) և քսանյութերը պահել փակ տարաներում կնքված և տանիքածածկ վայրերում	ՇԿ
		Տեղադրել պլաստիկ կամ այլ պաշտպանիչ կտորներ ցանկացած վայրերում, որտեղ պետք է ներկվեն աշտարակներ կամ այլ նյութեր	ՇԿ
		Շինարարական սարքավորումների տեխնիկական և վերալիցքավորման սպասարկումը պետք է իրագործվի միայն փակ և ցանկապատված տարածքներում կամ սպասարկման կետերում	ՇԿ
		Սովորեցնել տրանսպորտային միջոցների աշխատողներին, թե ինչպես կանխարգելել արտահոսքերը հատկապես վառելիքի լիցքավորման և բեռնաթափման ընթացքում	ՇԿ , ՆԿ
		Արագ արձագանքել և զեկուցել արտահոսքերի մասին և սովորեցնել աշխատողներին զեկուցման ընթացակարգը	ՇԿ ,ԻԱԽ
		Հեռացնել աղտոտված հողը եթե առաջանա արտահոսք	ՇԿ
		Հավաքել աղտոտված նյութերը և ռտեղակայել որպես վտանգավոր թափոն	ՇԿ
Օդ և աղմուկ	Շինհրապարակներ, մոտակա ճանապարհներ	Բեռնատեղափոխումների կառավարման օպտիմալացում բեռնատարների ավելորդ երթևեկությունից խուսափելու նպատակով:	ՇԿ , ՆԿ
		Հնարավորության դեպքում ցածր ձայնով էլեկտրական կամ մեխանիկական սարքերի օգտագործում:	ՇԿ
	Ցածր	Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շինարարական տեխնիկայի և այլ մեքենաների պարբերական տեխնիկական սպասարկում:	ՇԿ
		Հնարավորության դեպքում բարձր ձայնով մեխանիկական սարքերի օգտագործումը հասցնել նվազագույնի:	ՇԿ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
		Հնարավորության դեպքում բարձր ձայնով մեխանիկական սարքերի օգտագործումը հասցնել նվազագույնի:	ՇԿ
		Աղմուկի մակարդակը բանվորների համար, հնարավորության դեպքում, պետք է պահպանվի 80 դբ-ից ցածր (A): Եթե այս ցուցանիշները գերազանցվում են, ապա բանվորներին պետք է տրամադրվեն լսողության պաշտպանիչ սարքեր և պետք է տեղադրվեն նախազգուշական նշաններ:	-
	Մոտակա ճանապարհներ-Ցածր	Նյութերի փոխադրման ընթացքում բեռնատարների թափքի ծածկում բրեզենտով:	ՇԿ
		Տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի սպասարկումը պետք է կատարվի մատակարարների կողմից առաջարկված կերպով:	ՇԿ, սպասարկող կազմակերպություն
Օդ և աղմուկ	Ցածր	Վարորդների վերապատրաստում՝ վարորդական հմտությունների բարելավում:	ՇԿ
		Արդյունաբերական տրանսպորտային օպերատորների ուսուցում, մասնագիտացված տրանսպորտային միջոցների անվտանգ շահագործման, այդ թվում՝ ապահով բեռնման / բեռնաթափման, եւ բեռի սահմանափակման վերաբերյալ	ՇԿ, ԻԱԽ
	Ցածր	Չափի, քաշի կամ առանցքի ծանրաբեռնվածության սահմանափակումներ:	ՇԿ
		Զերծ մնալ ավելորդ դանդաղ աշխատող շինարարական մեքենաներից և փոխադրամիջոցներից:	ՇԿ
	Ցածր	Արգելվում է շինարարական աղբի այրումը աղբամաններում:	ՇԿ
Մշակութային միջավայր	Միջին	Զերծ մնալ մշակութային վայրերի վնասելուց և պահել բավականաչափ հեռավորություն կառուցվող հենարաններից:	ՇԿ, ԻԱԽ
	Ցածր (մեղմացման արդյունքում)	Պատահական գտածոյի ընթացակարգի իրականացում և շինարարական աշխատողների վերապատրաստում	ՇԿ
		Տեղեկացնել պատմամշակութային արժեքների պաշտպանության գործակալությանը/ Մշակույթի նախարարությանը կառուցվող հենարանների կամ մոտեցման ճանապարհների մասին պատմամշակութային վայրերը հատելուց խուսափելու համար:	ՇԿ, ԲԷՑ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Մշակութային միջավայր	Ցածր (մեղմացման արդյունքում)	Պատահական գտածոների ընթացակարգի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել ՀՀ Մշակույթի նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն:	ՇԿ, ԲԷՑ
		Կատարել շրջանցում մշակութային ժառանգություն ունեցող վայրերը հատելու դեպքում, որը պետք է որոշվի Մշակույթի նախարարության հետ խորհրդակցելով:	ԲԷՑ, ՇԿ, ՀՀ ՄՆ
Աշխատանքային պայմաններ	Շինհրապարակներ, Աշխատանքային անվտանգություն	Նախքան շինարարական աշխատանքների սկսելը մշակել ԱԱԲ քաղաքականություն:	ՇԿ, ԻԱԽ
		Նախքան շինարարական աշխատանքները ԱԱԲ Կառավարման պլանի շինարարական փուլի մշակումը (պետք է ներառի Թափոնների կառավարման պլանը)	ՇԿ, ԻԱԽ
		Շինարարության ընթացքում ներդնել ԱԱԲ կառավարման համակարգ (ԱԱԲԿՀ)	ՇԿ, ԻԱԽ
	Անվտանգություն	Բոլոր աշխատողները պետք է ունենան առողջապահական ապահովագրություն	ՇԿ
	Առողջապահություն	Ապահովել բավականաչափ քանակությամբ սանհանգույցներ և կանանց, և տղամարդկանց համար:	ՇԿ
	Անվտանգություն	Աշխատողներին տրամադրել անհատական պաշտպանության միջոցներ:	ՇԿ
	ՕԳ միջանցք	Հենարանների, ենթակայանների և այլ սարքավորումների վրա «Էլեկտրահարման վտանգ» նախազգուշացնող նշանների տեղադրում:	ՇԿ
	Կենսապայմաններ	Աշխատողների ճամբարը պետք է համապատասխանի ՄՖԿ/ՎՁԵԲ ստանդարտներին	ՇԿ, ԻԱԽ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Աշխատանքային պայմաններ	Կենսապայմաններ	Հարակից բնակավայրերում աշխատողներին տեղավորելն առաջնահերթ խնդիրներից է: Շինարարական ճամբարները անհրաժեշտության մասին պետք է տեղյակ պահել համապատասխան համայնքային իշխանություններին	ՇԿ, ԲԷՑ
	Առողջություն և անվտանգություն	Սովորեցնել աշխատողներին ճիշտ աշխատել ծանր տեխնիկայի, էլեկտրական սարքավորումների, փոխադրամիջոցների, վտանգավոր նյութերի հետ և կարողանալ խուսափել վտանգից և ձեռնարկել կանխարգելման միջոցներ, առաջին օգնություն ցուցաբերել և փրկարարական տեխնիկային տիրապետել, ինչպես նաև հակազդել վթարային իրավիճակներում և այլն	ՇԿ
		Ցանկացած աշխատանքային խմբում պետք է ունենալ մեկ (ցանկալի է երկու անձ) որը առաջին բուժ-օգնության դասերընթացներ է անցել:	ՇԿ
		Ծրագրի տարածքում և բոլոր մեքենաներում առաջին օգնության հավաքածուների և կրակմարիչների ապահովում	ՇԿ
		Եթե աշխատակիցները գտնվում են հեռավոր վայրերում, ապա նրանք պետք է ապահովված լինեն բջջային և ռադիո կապով:	ՇԿ
		Շինարարական հրապարակներում և ճամբարներում ակոհոլի և թմրամիջոցների արգելում:	ՇԿ
		Հիմնել շարժական կլինիկաներ աշխատակազմի համար, որոնք ի վիճակի կլինեն բուժ.օգնություն ցուցաբերել շինարարական հրապարակում տեղի ունեցած հիվանդությունների ու վնասվածքների դեպքում:	ՇՇԿ
		Պատահարների դեպքում տուժած բանվորների փոխադրման ապահովում	ՇԿ
		Ունենալ տարածքի արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման կետերին հասցեները	ՇԿ, ՆԿ

Ազգակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Աշխատանքային պայմաններ	Առողջություն և անվտանգություն	Իրականացնել բժշկական ստուգումներ, առողջության և անվտանգության մոնիթորինգներ և հաշվետվություններ	ՇԿ, ԲԷՑ
		Առաջիկա շինարարական գործունեության մասին Նախապես տեղեկացնել բնակչությանը և մոտակա գյուղերում բնակվող մարդկանց	ՇԿ, ԲԷՑ
		Շինարարության փուլից առաջ հասարակությանը տեղյակ պահել վտանգի, անվտանգության միջոցառումների, վտանգավոր պայմանների վերաբերյալ զեկուցման եւ հարակից գյուղերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ,	ՇԿ
		Ծանր սարքավորումներ տեղադրելու դեպքում հանրային ճանապարհների մոտ ապրող բնակչությանը նախապես տեղյակ պահել	ՇԿ
Հանրային	Հանրային ճանապարհներ Միջին	Ապահովել համապատասխան անվտանգության միջոցներ վթարներից և վնասվածքներից զերծ մնալու համար(օրինակ հանրային ճանապարհներին պահպանել արագության սահմանաչափը):	ՇԿ
		Շրջակա գյուղերի և բնակավայրերի մոտ՝ հիմնական ճանապարհների և շին հրապարակների երկայնքով ամրացնել նախազգուշացնող նշաններ:	ՇԿ
	Շինհրապարակ- ներում Ցածր	Նախքան համապատասխան շինարարություն սկսելը տրամադրել հստակ և համապատասխան ցուցանակներ աշխատանքային տարածքներն ու վտանգավոր սարքավորումները ճանաչելու համար:	ՇԿ
	Միջին	Ապահովել պատշաճ անվտանգություն կանխելու համար մարդկանց մուտքը վտանգավոր նյութերով և թափոններով ենթակայարաններ և շինհրապարակներ:	ՇԿ
	Ցածր	Շինարարական հրապարակների մոտ տեղադրել նշաններ, որպեսզի երթնեկությունը տարվի պատշաճ հեռավորության վրա:	ՇԿ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Հանրային	Մոտակա գյուղերում Ցածր (մեղմացման արդյունքում)	Հաստատել աշխատանքի վարքականոն կանխելու համար համայնքների հետ խնդիրները:	ՇԿ, ԻԱԽ
		Օդային զծի 50մ միջանցքում, չպետք է որևէ բնակելի տարածք լինի	
		Բնակիչների համար աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի 55 dB (A)	
		Աշխատանքների սկիզբը և տևողությունը նախապես տեղեկացնել հանրությանը:	ՇԿ
Միջին	Մոտակա գյուղերում, հանրային ճանապարհներին	Հանրային ճանապարհներին պահպանել արագության սահմանաչափումները:	ՇԿ
		Աշխատանքների ընթացքում, չխոչընդոտել երթևեկությունը:	ՇԿ
Ցածր	Միջին	Շինարարությունից առաջ նախապես որոշել ծանր բեռնատարների անցման ճանապարհը, տեղանքում արագության աստիճանը (20 կմ/ժ, ծանր բեռնատարների համար), բեռնատարների ստուգման պահանջները, շահագործման կանոնները և ընթացակարգերը	ՇԿ
		Շինարարության ընթացքում ապահովել աշխատողներին ավտոբուսով՝ նվազագույնի հասցնելով երթևեկությունը:	ՇԿ
Ցածր	Ցածր	Պարբերաբար ստուգել տրանսպորտային միջոցները եւ խնամքով օգտագործել դրանք, խուսափելու համար սարքավորումների անսարք լինելու պատճառով տեղի ունեցող պատահարներից	ՇԿ
Ցածր	Ցածր	Նախքան շինարարության սկսելը համագործակցել տեղական համայնքների և իշխանությունների հետ՝ բարելավելու համար ցուցանակների տեսանելիությունը և ճանապարհների ընդհանուր անվտանգությունը, մասնավորապես, դպրոցների, կամ այլ վայրերի մոտ, որտեղ կարող են երեխաներ լինել:	ՇԿ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Հանրային	Մոտակա գյուղերում Ցածր	Շինարարության ընթացքում համագործակցել տեղական համայնքների հետ երթևեկության և հետիոտների անվտանգության ապահովման մասին, որպեսզի երթևեկությունը տարվի պատշաճ հեռավորության վրա:	ՇԿ, ՆԿ, ազդակիր համայնքներ
	Միջին	Բոլոր տարածքները ապահովել լուսավորությամբ և համապատասխան նշագծումներով:	ՇԿ, ԵԿ
Շինհրապարակներ ՕԳ միջանցք		Շինհրապարակի տարածքը բավականաչափ նշանագծել գիշերային տեսանելիության համար:	ՇԿ, ԵԿ
		Պահպանել անհրաժեշտ նվազագույն հեռավորությունը գործող հոսանքի գծերի(35 / 110 / 220 kV ՕԳ-երի) որը ապահովում է երկու գուգահեռ գծերի լայնությունը:	ՇԿ, ԻԱԽ
		Այն տեղերում, որտեղ անցնում են գոյություն ունեցող գծերը, պետք է ապահովել բավարար մինիմալ տարածություն հաղորդիչների միջև (> 4 մ)	ՇԿ, ԻԱԽ
		Մոտեցման ճանապարհների կառուցման սահմանափակումը և ճիշտ երթուղու նախագծումը թույլ կտա նվազագույնի հասցնել գյուղատնտեսական հողերի վրա ազդեցությունը	ՇԿ, ՆԿ
Ցածրադիր հատվածներ		Հրապարակները տեղակայել գոյություն ունեցող ճանապարհներին մոտ, նվազեցնելու համար ազդեցությունը գյուղատնտեսական գործունեության վրա եւ հեշտացնել տեղանքի մաքրման եւ վերականգնողական աշխատանքները	ՇԿ, ԻԱԽ
Հանրային վարելահողեր Ցածր		Կարգավորել շինարարական աշխատանքները այնպես, որպեսզի չխոչընդոտել բերքահավաքի ժամանակահատվածին՝ որքան հնարավոր է քիչ վնաս հասցնելու համար մշակաբույսերին:	ՇԿ, ԲԷՑ
Տեղական համայնքներ		Անկողմնակալ անձի ներկայություն՝ շինարարության գործընթացի ընթացքում բողոքներ ստանալու ժամանակ	ՇԿ, ԻԱԽ, ԲԷՑ
		Շինարարական աշխատանքներ կատարելու առաջնահերթությունը տալ տեղի բնակիչներին:	ՇԿ
		Համալրել կանանց շինարարական աշխատանքներում:	ՇԿ

Ազդակիր բաղադրիչը /Ընկալիչը	Ազդեցության մակարդակը	Մեղմող միջոցառումներ	Իրականացման պատասխանատուն
Հանրային	Տեղական համայնքներ	Մշակել և իրականացնել առանց խտրականության աշխատանքի ընդունման և վճարման քաղաքականություն (հստակ հայտարարելով, որ ընկերությունը խտրականություն չի դնում՝ աշխատանքի ընդունման, աշխատավարձերի վճարման, սեռի, տարիքի, կրոնի կամ ազգությանների միջև)	ՇԿ, ԻԱԽ
	Ծրագրի ազդակիր անձինք	Իրավաբանական փորձագետները կաջակցեն ԾԱԱ անօրինական հողերը գրանցելու համար:	ՇԿ, ԻԱԽ
		ԾԱԱ փոխհատուցում վճարել մշակաբույսերի կորստի և հողի վնասների համար:	ՇԿ,ԲԷՑ
		Մշակել և ներդնել/կիրարկել Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ), հիմնված նախագծային փաթեթում ներկայացված վերաբնակեցման քաղաքականության շրջանակի (ՎՔՇ) վրա	ՇԿ, ԻԱԽ
	Գենդերային խնդիրներ	Զրո հանդուրժողականություն աշխատանքի վայրում	ՇԿ
		Գենդերային հարցերի վերահսկողություն (օրինակ կանանց կողմից ստացված բողոքներ):	ՇԿ, ԻԱԽ

6.6. Մոնիթորինգի պլան

Աղյուսակ 5-4: Մոնիթորինգի միջոցառումներ

Ո՞ր չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչ ու չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Որտե՞ղ պետք է չափանիշը ենթարկվի մոնիթորինգի	Ե՞րբ չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչպե՞ս է չափանիշը ենթարկվում մոնիթորինգի	Մոնիթորինգի արժեքը	Ո՞վ է մոնիթորինգի պատասխանատուն
Ընտրված տարածքների կենսաբազմազանության հետազոտություն	Տեսակների կորուստից Խուսափելու համար այն գրանցված է կարմիր գրքում	ՕԳ գծի միջանցք	Նախքան ՕԳ միջանցքի ընտրությունը	Զննումը զեկույցի վերաբերյալ ՕԳ միջանցքի սկսելու հարցման արդյունքում	5,000 USD	ՇԿ, ԵԿ, ԻԱԽ
Պատմական և մշակութային տեղանքներ	Պատմական և մշակութային հուշարձանների վնասներից խուսափելու համար	Նոր աշտարակների և ճանապարհների գտնվելու վայրը	Նախքան շինարարական աշխատանքները Նախքան ՕԳ-երի միջանցքի ընտրությունը	Գրառումների ստուգում	Ընդգրկված է նախագծային ծախսերում	ՇԿ, ՆԿ, ԻԱԽ
Հողի բարձրությունը, խորությունը, հումուսի պարունակությունը, ԹԻ-ը	Նվազագույնի հասցնել բարձրադիր հողերի կորուստները	ՕԳ միջանցքը: Նոր ճանապարհների վայր	Նախքան շինարարական աշխատանքները	Խորության չափումը, նմուշառումն ու անալիզը	5,000 USD	ՇԿ, ՆԿ, ԻԱԽ
Շինարարական նյութերի որակը	Ապահովել շինարարական նյութերի անվտանգությունը մարկանց առողջության համար	Մատակարարման գրասենյակում կամ պահեստում	Մատակարարման պայմանագրերի կնքման ընթացքը	Փաստաթղթերի ստուգում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ, ՆԿ, ԻԱԽ
Շինտեխնիկայի տեղաշարժ	Սարքավորումների շահագործման ժամանակ զերծ մնալ ջրի, հողի աղտոտումից	ՕԳ-երի երկայնքով Շինարարական ճամբարներ և ժամանակավոր կացարաններ	Սարքավորումների շահագործման ընթացքը	Գործունեության մասին	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ

Ո՞ր չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչ՞ու չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Որտե՞ղ պետք է չափանիշը ենթարկվի մոնիթորինգի	Ե՞րբ չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչպե՞ս է չափանիշը ենթարկվում մոնիթորինգի	Մոնիթորինգի արժեքը	Ո՞վ է մոնիթորինգի պատասխա- նատուն
Շինարարական նյութերի եւ թափոնների փոխադրումը	- հողի եւ օդի աղտոտվածության սահմանափակում: - Նվազագույնի հասցնել տեղական համայնքների բնա- կիչներին աղմուկից և տատանումներից հասցվող վնասը: - Նվազագույնի հասցնել երթևեկու- թյան ազդեցությունը:	- Շինհրապարակ - Շինարարական նյութերի և թափոնների փոխադրման ճանապարհներ	Չհայտարարված ստուգումներ աշխատանքային ժամերին և այդ ժամերից հետո	Նախատեսվող տարածքին կից ճանապարհների ստուգում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ
Հողի էրոզիա	Կանխարգելել հետագա էրոզիան	Պահեստներ	Շաբաթական շինարարական աշխատանքների ժամանակ	էրոզիայի առաջացման և կանխարգելման վիզուալ գնում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ
Հողի ախտոտվածություն	Նվազեցնել հողի ախտոտվածությունը	Բոլոր շինհրապարակները՝ այդ թվում ճամբարները և ճանապարհները	Շաբաթական շինարարական աշխատանքների ժամանակ	Արտաքին գնում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ
	Կանխարգելել հողի ախտոտվածությունը	Կայանատեղերը, ճանապարհներն և ՕԳ- երը	Ամսական շահագործման փուլի ընթացքում	Արտաքին գնում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ , ՆԿ
Օդի որակ՝ փոշի, ծուխ	Նվազեցնել օդի ախտոտվածությունը	Բոլոր շին հրապարակները՝ այդ թվում ճամբարները և ճանապարհները	Ամեն օր շինարարական աշխատանքների ժամանակ	Արտաքին գնում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ

Ո՞ր չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչ՞ու չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Որտե՞ղ պետք է չափանիշը ենթարկվի մոնիթորինգի	Ե՞րբ չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչպե՞ս է չափանիշը ենթարկվում մոնիթորինգի	Մոնիթորինգի արժեքը	Ո՞վ է մոնիթորինգի պատասխա- նատուն
Օդի որակը՝ ծուխ	Նվազեցնել օդի ախտոտվածությունը	Կայանման վայրեր, մոտեցման ճանապարհներ	Շաբաթվա ընթացքում՝ շահագործման փուլում	Տեսողական զննում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ
Աղմուկ	Նվազեցնել աղմուկի մակարդակը	Բոլոր շինհրապարակ- ները այդ թվում ճամբարները և ճանապարհները	Շաբաթական շինարարական աշխատանքների ժամանակ	Ձայնի բարձրություն	80 USD, ընդհանուր: 4000 USD	ՇԿ , ՆԿ
Անվտանգություն	Ապահովել երթևեկության անվտանգությունը	Բոլոր ընդհանուր ճանապարհները օգտագործվում են ՇԿ-ի կողմից	Ամենօրյա շինարարական աշխատանքների ժամանակ	Տեսողական զննում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ
Շինարարական աղբ	- Կանխել հողի, մակերևութային և ստորերկրյա ջրի ախտոտումը - Խուսափել ցրված բեկորներից և թունավոր նյութերից - Պահպանել շինհրապարակի և շրջակայքի գեղագիտական տեսքը	Շինհրապարակ, Թափոնների հեռացում	Պարբերաբար շինարարության ընթացքում և ավարտից հետո	1 Շին ճամբարների և ժամանակավոր կացարանների ստուգում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ , ՆԿ
Աղբի հեռացում	Կանխարգելել հողի, մակերևութային և ստորերկրյա ջրի ախտոտումը	Ճամբարներ	Պարբերաբար շահագործման փուլի ընթացքում	Տեսողական զննում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ , ՆԿ

Ո՞ր չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչ՞ու չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Որտե՞ղ պետք է չափանիշը ենթարկվի մոնիթորինգի	Ե՞րբ չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչպե՞ս է չափանիշը ենթարկվում մոնիթորինգի	Մոնիթորինգի արժեքը	Ո՞վ է մոնիթորինգի պատասխա- նատուն
Ռեկուլտիվացում և կանաչապատում	ՕԳՆ-երի կառուցման հետևանքով լանդշաֆթի էսթետիկ արժեքի կորուստ	Բոլոր շինհրապարակները՝ այդ թվում ճամբարները մոտեցնում են ճանապարհները ՕԳ- գծին	Շինարարության վերջնաժամկետ	Տեսողական զննում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ, ՆԿ, ԻԱԽ,ԲԷՅ
Աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունը	Կրճատել վնասվածքների եւ վթարների հավանականությունը	Բոլոր շինհրապարակներում	Ընդհանուր շինարարական աշխատանքների ժամանակահատվածը	Տեսչական զննումներ	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ, ՆԿ
Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն	Կառուցապատման ժամանակ նվազեցնել առկա ռիսկերը	Բոլոր շինհրապարակներում	Շինարարական աշխատանքների ընդհանուր ժամանակահատվածը	Պարբերական ստուգումներ	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ, ՆԿ
Համայնքների իրազեկում	Նվազեցնել առաջացող ռիսկերը շինհրապարակների մոտակայքում բնակվող բնակիչների համար	Տեղական համայնքներ	Նախքան շինարարական աշխատանքները	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակների հարևանությամբ բնակվող բնակիչների հետ հարցազրույցներ	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ, ՆԿ
Հանրային առողջություն և անվտանգություն	Ապահովել բնակիչների համապատասխան զգուշացում	Բնակավայրերին մոտ աշխատանքային հրապարակների շուրջը և գլխավոր ճանապարհների երկայնքով	Ամսական	Նախազգուշացնող նշանների ստուգում	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ, ԻԱԽ

Ո՞ր չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչ՞ու չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Որտե՞ղ պետք է չափանիշը ենթարկվի մոնիթորինգի	Ե՞րբ չափանիշը պետք է ենթարկվի մոնիթորինգի	Ինչպե՞ս է չափանիշը ենթարկվում մոնիթորինգի	Մոնիթորինգի արժեքը	Ո՞վ է մոնիթորինգի պատասխա- նատուն
Աշխատանք	Աշխատանքի ընդունման և վարձատրության ոչ խտրական քաղաքականության իրականացում Առաջնահերթությունը տրվում է տեղաբնակներին շինարարական աշխատանքների համար	<ul style="list-style-type: none"> - Տեղական համայնքներ - ՇԿ տեղական գրասենյակներ 	Կանոնավոր շինարարության ժամանակ	Հարցազրույցներ	Ներառված է շինարարական ծախսերում	ՇԿ , ՆԿ
Գենդերային ասպեկտներ	Զրո հանդուրժող- ականություն աշխատանքի վայրում կամ բանվորների ճամբարներում/ գիշերակացերի վայրերում	<ul style="list-style-type: none"> -Բոլոր Շինհրապարակներում -Տեղական համայնքներ 	Ամսական շինարարության ընթացքում Եռամսյակային շահագործման փուլի ընթացքում	-Հարցազրույցներ կանանց հետ -Բաղոքների գնում	Ներառված է շինարարական և շահագործման ծախսերում	ՇԿ , ՆԿ, ԻԱԽ
Բողոքներ, Փոխհատուցում մեխանիզմ	Բողոքների և փոխհատուցումների մեխանիզմների և դրանց արդյունավետության սպառնալու	<ul style="list-style-type: none"> - Տեղական համայնքներ - ՇԿ տեղական գրասենյակներ 	Ամսական	-Բողոքների ստուգում -Հարցազրույցներ աշխատակիցների և համայնքների ղեկավարների հետ	Ներառված է շինարարական և շահագործման ծախսերում	ՇԿ , ԻԱԽ, ԲԷՑ

7. Հղումներ

- Եվրոպական Խորհուրդ (ԵԽ), Եվրոպական Հանձնաժողով (ԵՀ) 2010թ. Հայաստանի ժառանգության գնահատման զեկույց: Շտրասբուրգ, 2010թ:
- Եվրոպական օգնություն 2010թ. Աղբահանման գործողությունների ուղեցույց ձեռնարկ: Թափոնների կառավարում՝ ENPI Արևելք: Բրյուսել, 2010թ, հոկտեմբեր:
- EU Directive on Electromagnetic Fields 2004: Council Directive 2004/40/EC of 29 April 2004 on the minimum health and safety requirements regarding the exposure of workers to the risks arising from physical agents (electromagnetic fields).
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀԿ) 2009թ. Որոշում No. 363 «Էլեկտրական Ցանցերի Անվտանգության Գոտու վերաբերյալ Տեխնիկական Կանոնակարգի հաստատում», Երևան:
- Scaling Up Renewable Energy Program (SREP). Investment Plan for Armenia. Yerevan, 2016
- Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ) 2007թ. Շրջակա միջավայրի, առողջապահության և անվտանգության (ՇՄԱԱ) ուղեցույցներ: Տեա <http://www.ifc.org/ehsguidelines>
- ՀՀ Բնապահպանության նախարարություն (ԲՆ) (2014թ.), Կենսաբազմազանության կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի Հանրապետության հինգերորդ ազգային զեկույցը: Երևան: Տեա՝ <http://www.cbd.int/doc/world/am/am-nr-05-en.pdf>
- World Wide Fund for Nature (WWF) 2011: Forest Restoration Guidelines: Restoration of Forest Landscapes in the Southern Caucasus. WWF - Caucasus Programme Office, April 2011.
- World Bank Group: Operational Directive 4.01: Environmental Assessment.
- International Fund For Agricultural Development (IFAD)
- (2003): Country Strategic Opportunities Paper.
- National Atlas of Armenia. Yerevan, 2007

Հավելված Ա Ձևաչափ

Ձևաչափ EM1: Աշխատակիցների ուսուցման հաշվետվություն

Ամիսը՝

1.1 Աշխատակիցների վերապատրաստումը ըստ աշխատատեղի՝

(i) Տեխնիկական, (ii) Դաշտային անձնակազմ կամ (iii) Կապալառուի անձնակազմ (ամեն աշխատողի համար օգտագործել մեկ ձև)

Ուսուցման ամսաթիվ	Հաճախում (թիվ)	Ուսուցման նպատակը	Մեկնաբանություններ
Ընդամենը		xxxxx	xxxx

1.2: Վերապատրաստման ամենամյա վիճակագրություն

Ամիս: Տարի.....

1.2.1: Մարդկանց վերապատրաստման քանակը (թիվ)

Պաշտոն	Տարվա վերջին ամսվա համար	Ընդհանուր այս ամսվա ընթացքում	Ընդհանուր տարվա համար
Տեխնիկական			
Դաշտային անձնակազմ			
Կապալառուի անձնակազմ			

1.2.2 Անցկացվող դասընթացների քանակը(թիվ)

Պաշտոն	Տարվա վերջին ամսվա համար	Ընդհանուր այս ամսվա ընթացքում	Ընդհանուր տարվա համար
Տեխնիկական			
Դաշտային անձնակազմ			
Կապալառուի			

անձնակազմ			

Անուն և Ստորագրություն

Կայքի ինժեներ /Կառավարիչ
 Աշխատանքային ժամի սկիզբը `
 Աշխատանքային ժամի ավարտը `

Ձևաչափ 2. Տեղադրության ընտրություն

Չափորոշիչներ, որոնց համար յուրաքանչյուր կայքի համար պետք է հավաքագրվել	Տեղան ք1	Տեղան ք2	Տեղան ք3	Տեղան ք4
Չափորոշիչներ, որոնց համար յուրաքանչյուր կայքի համար պետք է հավաքագրվել				
Զբաղեցրած տարածքը (մ2)				
Ընդհանուր նյութ, որը կարող է թափվել շինարարական հրապարակում(մ3)				
Իրագործելի խորություն(մ)				
Մոտակա ջրի խորություն(մ)				
Մոտակա բնակավայրը(մ)				
Համայնքային խորհրդատվությունների ամսաթվերը				
Արդյոք համայնքը համաձայն կլինի թափփված շին հրապարակում....				
Գյուղի նախագահի թույլտվության ամսաթիվը				
Հետագա շին հրապարակի օգտագործումը				

Անուն և Ստորագրություն

Կայքի ինժեներ /Կառավարիչ
 Աշխատանքային ժամի սկիզբը `
 Աշխատանքային ժամի ավարտը `

Ձև 3 Շինարարական ճամբարը և մակերեսը

Շինարարության փուլը: հաշվետվություն- օր_____ ամիս_____ տարի_____
 Ձևաչափը պետք է ներկայացվի մինչև ճամբարների հաստատման օրը
 ճամբարի գտնվելու վայրը(կմ_____)

SI.No	Նյութ	Միավոր	Մանրամասներ	Դիտողություններ
1	Ճամբարին վերաբերվող մանրամասները			
ա	Ճամբարի չափը	Առավելագույն		
բ	Ճամբարի տարածքը	ք /մ		
գ	Հեռավորությունը մոտակա բնակավայրից			
դ	Ամենամոտ ջրի աղբյուրից հեռավորությունը	Տիպը / Չափ / Կարողությունը / Մեփականությունը		
ե	Ճամբարի ստեղծման ամսաթիվը/օր/ամիս/տարի			
զ	Ներկայում օգտագործվող հողը			
է	0.3մետր տարամագծից ավել ծառեր չկան			
ը	պահեստային տարածքների մանրամասները (անանցանելի տարածքի առկայությունը)	Առավելագույն		
թ	Պահեստային տարածքից գատ առանձին աղբահանության վայրի առկայություն			
2	Բերրի հողի պահեստավորման մանրամասներ			
Ա	հողի մակերեսի հեռացված քանակը			
Բ	հողի վերին շերտի պահպանման մանրամասները	Նկարագրել կույտի դասավորումը		
3	Աշխատողների հետ կապված մանրամասներ			
Ա	բանվորների ընդհանուր քանակը	Թիվ		
Բ	Տղամարդկանց ընդհանուր քանակը	Թիվ		
Գ	18 տարեկանից ցածր տղամարդկանց թիվը	Թիվ		
Դ	Կանանց ընդհանուր քանակը	Թիվ		
Ե	18 տարեկանից ցածր կանանց թիվը	Թիվ		
զ	Երեխաների քանակը	Թիվ		

4	Կացարանների վերաբերող մանրամասներ			
ա	Կացարանների/խրճիթների քանակը	Թիվ		
բ	Կացարանների նվազագույն չափը	Առավելագույն		
գ	Կացարանների մուտքերը	Թիվ		
դ	Բացման նվազագույն չափը	Առավելագույն		
ե	Պատերը	Առանձնահատկությունները		
զ	Տանիքը	Առանձնահատկությունները		
է	Հատակը	Առանձնահատկությունները		
ը	Խմելու ջրի ավազանը	Առանձնահատկությունները		
թ	Խմելու ջրի ավազանի հզորությունը	cum		
ժ	Խմելու ջրի քանակը	Առավելագույն		
ի	Խմելու ջրի ընդհանուր քանակը	Թիվ		
լ	Կանանց համար նախատեսված ջրի քանակը	Թիվ		
խ	Ջրի նվազագույն չափը	Առավելագույն		
ծ	Կին աշխատողների լոգարանների քանակը	Թիվ		
կ	Սեպտիկ ավազանների քանակը կանանց լոգարաններում	Առավելագույն		
հ	Զուգարանների ջրի բաքի հզորությունը / լոգարաններ և ընդհանուր նշանակության			
ձ	Ճամբարի շուրջ ցանկապատում	Այո/Ոչ		
5	Հարմարությունների մանրամասները			
ա	24 ժամյա պահպանություն	Այո/Ոչ		
բ	Առաջին օգնության հարմարանքներ	Այո/Ոչ		
գ	Խնամքի կենտրոնի առկայություն	Այո/Ոչ		
դ	Աղբամանների առկայություն(տարողությունը 60լիտր)	Թիվ		

Անուն և Ստորագրություն
Կայքի ինժեներ /Կառավարիչ

Աշխատանքային ժամի սկիզբը`
 Աշխատանքային ժամի ավարտը`

Ձևաչափ EM4: Ծառահատումներ

No	Հղումներ	Ֆիզիկական թիրախ				Թիրախի ավարտ		Հետաձգման պատճառը
		Ընդհանուր	Թիրախ	Թիրախին հասնել	Առաջադրանքի րականացման աստիճանը, %	Ամսաթիվ	Առաջադրանքի ավարտման օրը	
		Միավոր						
1		թիվ						
2		թիվ						
3		թիվ						
4		թիվ						

Անունը և ստորագրությունը

Կայքի գծով ինժեներ / Վերահսկիչ

ՀԷԿ եւ բնապահպանական մասնագետ.....

Աշխատանքային ժամի սկիզբը`

Աշխատանքային ժամի ավարտը`

EM 5 Հողի պահպանման մոնիթորինգ

Պայմանագիր _____

Հաշվետվության համարը _____

Ամսաթիվ _____

Գտնվելու վայրը	Հողի վերին շերտի օգտագործումը	Բերրի հողի աղտոտման, կանխարգելման չափանիշները	Նախատեսվող պահպանման մեթոդ	Կանխատեսվող Պահպանման ժամկետը	Սոտակա ջրի հեռավորությունը(մ)	Առկա կույտի թերությունը	Արդյոք նախատեսված է առանձնացնել տիղմը	Նախատեսված է այլ միջոց: Եթե այո, ո՞րն է այն	Պահանջվող բարելավումներ	Համապատասխանության աստիճանը՝ ամսաթվի զեկույցը

Անուն և ստորագրություն

Կայքի գծով ինժեներ / Վերահսկիչ

ՀԷԿ եւ բնապահպանական մասնագետ

Աշխատանքային ժամի սկիզբը՝

Աշխատանքային ժամի ավարտը՝

Ձևաչափ 6: ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՁԵԿՈՒՅՑ N1

Ծրագիր _____

_____ Իրագործող գործակալություն

Ստուգումների գործողության շրջանակը _____

Եղանակային պայմանները _____

Ներկաները՝ Դիրքը և պաշտոնը _____

Ամսաթիվ _____

Մոնիթորինգյան այցը իրականացվում է

Ընդհանուր աշխատանք						
Շրջակա միջավայրի կառավարում՝ բնապահպանական թիմ, առողջություն և անվտանգություն, արտակարգ իրավիճակ, թրեյնինգներ, բողոքների լուծման մեխանիզմը						
Շինարարական գործունեություն		Միջոցառումների մեղմացում (ըստ ԲԿՊ-ի)	Իրականացված մեղմացուցիչ միջոցառումներ Այո / Ոչ / Աժ	Մեղմացման արդյունավետությունը* 1 - 5	Ուղղիչ գործողությունների պահանջ (ՈԻԳՊ), ներառյալ արդյունավետ ՈԻԳ վերջնաժամկետը	Նախորդ ՈԻԳՊ կարգավիճակը (լուծված/լրացուցիչ գործողությունների պահանջ)
Շրջակա միջավայրի թիմ						
Բոլոր գործողությունները	1.	Շրջակա միջավայրի կառավարման պատասխանատուն նշանակվել է եւ ներկա է տեղում				
	2.	Արտակարգ իրավիճակների կառավարման պատասխանատուն նշանակվել էւ ներկա է տեղում				
	3.					
Թրեյնինգներ և կողմնորոշման դասընթացներ						

Բոլոր գործողությունները	4.	Աշխատակիցները ծանոթացել են ԲԿՊ-ին աշխատանքի վայրում				
Բոլոր գործողությունները All activities	5.	Աշխատակիցները ծանոթացել են ԲԿՊ-ին աշխատանքի վայրում				
Բոլոր գործողությունները	6.	Տրամադրել աշխատակիցների համար բնապահպանական և անվտանգության հատուկ ուսուցում				
Բոլոր գործողությունները	7.	Շինհրապարակը պահել մաքուր բեկորներից, աղբակույտից և այլն				
Բոլոր գործողությունները	8.	Աղբահանության համար աղբամաններ են տեղադրվել				
<i>Հանրային կապ և բողոքների լուծման մեխանիզմ՝ բնապահպանական խնդիրներ</i>						
Բոլոր գործողությունները	9.	Մարդկանց տեղեկացնում են՝ էլեկտրաէներգիայի անջատումների, շինարարական աշխատանքների համար նախատեսվում է հանդիպումներ համայնքների անդամների հետ, անցկացվում են բնապահպանական և մեղմացնող միջոցառումներ				
Բոլոր գործողությունները	10.	Նկատվել են բողոքներ հասցեագրված վերջին այցի ընթացքում				
<i>Բնապահպանական պարամետրեր՝ Փոշու վերահսկում</i>						
Հողագործություն,	11.	Բեռնատարները աշխատում են				

նյութերի առաքում, առկա մայթերի հեռացում, ասֆալտապատում		ծածկոցներով			
	12.	Շինհրապարակները ծածկված ջրով			
<u>Աղմուկի հսկողություն</u>					
Հողագործության ընթացքում մեքենաների շահագործումը, նյութերի առաքում, առկա մայթերի հեռացում, ասֆալտապատում	13.	Շինարարության աղմուկի մակարդակները ընդունելի են ամենամոտ գտնվող զգայուն ընկալիչներին			
	14.	կարգավորվում է սահմանափակելով աշխատանքային ժամերը			
Մեքենաների շահագործումը, մայթերի հեռացում, ասֆալտապատում	15.	<u>Վիբրացիայի հսկողություն</u> Կիրառվում է վիբրացիայի ենթարկման ժամանակը նվազեցնելու համար			
Հողագործություն	16.	<u>Էրոզիայի վերահսկողություն</u> Պեղված լանջերի կայունացում			
Բոլոր աշխատանքների ժամանակ օգտագործվել է հեղուկներ	17.	Ինչպես հարկն է արտանետումներ են հասցրել			
Հողագործություն	18.	Մնացորդների արտահոսքի կանխարգելում			
Բոլոր աշխատանքների ժամանակ օգտագործվում է մեքենաներ	19.	Նախքան հիմնական ճանապարհներ մտնելը անվադողերը մաքրվում են			
Հողագործություն	20.	Նյութերը և շինարարական աղբը կամ դուրս բերել շինհրապարակից, կամ			

		Ժամանակավորապես պահպանել աղբամանների մեջ				
Աշխատանքներ	21.	Մարգագետինների և բուսականության պաշտպանություն				
Շինարարական աղբի կառավարում						
Հողագործություն, կառույցների քանդում, ապամոնտաժման աշխատանքներ	22.	Ոչ վտանգավոր թափոններ(պեղումային նյութ, ժայռեր, բետոնային և մետաղական մասեր, և այլն) կառավարվում է ԹՓԿ-ին համաձայն				
Քիմիկատների, օգտագործումը՝ վառելիք, քսայուղեր և այլն	23.	Արտահոսքերը և հեղուկ թափոնները կառավարվում են ԹՓՊ-ի համապատասխան				
Կապալառուի հարմարություններն ու սարքավորումները						
Կապալառուի ճամբարի ստեղծումը	24.	Ճամբարի շինարարական հրապարակի կառավարման պլանը հասանելի է և ճամբարը տեղադրվել է ԲԿՊ-ի պայմաններին համապատասխան				
Կապալառուի ճամբարի գործողությունը	25.	Մեքենաների և սարքավորումների կայանատեղին և սպասարկումը կազմակերպվում է պատշաճ կերպով՝ վերալիցքավորելով, մաքրելով և այլն				
Կապալառուի ճամբարի	26.	Վառելանյութերի, քիմիական նյութերի, քսայուղերի և այլ				

գործողությունը		հեղուկ նյութերի պահեստավորումը կազմակերպվել է պատշաճ կերպով				
Կապալառուի ճամբարի գործողությունը	27.	Վտանգավոր նյութերի պահեստավորումը կազմակերպվում է պատշաճ կերպով				
Կապալառուի ճամբարի գործողությունը	28.	Ճամբարը մաքուր է պահվում բեկորներից, աղբից և ալն: Թափոնները հավաքվում և տրամադրում են հաստատված կայքերին				
Կապալառուի ճամբարի գործողությունը	29.	Թափոնների, ջրի հավաքագրումը և գործածումը կազմակերպվում է պատշաճ կերպով				
Պեղված նյութ, աղբանետման կայքեր						
Ճանապարհի մնացորդային նյութերի վերահսկում	30.	Հասարակական ընդհանուր օգտագործման ճանապարհ դուրս գալուց առաջ տրանսպորտային միջոցների անվադողերը մաքրվում են ցեխից և մնացորդային նյութերից Հասարակական ճանապարհները մաքրել ցանկացած նյութերից, որոնք արտանետվել են բեռնափոխադրումների				

		Ժամանակ				
	31.	Հասարական ընդհանուր օգտագործման ճանապարհով բեռ տեղափոխելու ժամանակ քարշիչ բեռնատարները ծածկվում են անջրանցիկ բրեզենտով				
	32.	Բեռնատար մեքենաների ետին և կողային մասերը համապատասխանում են պահանջներին, որը նյութին թույլ չի տալիս թափվել ճանապարհներին				
	33.	Վառելիքի և նավթի հեղուկը տեսանելի է պեղումներ կատարելու կամ աղբավայրերում				
Պեղումներ, աղբանետում	34.	Փոշու հսկողություն իրականացվում է աղբավայրի, պեղումների կամ բերրի հողի պահեստային մասերում				
	35.	Տեղանքում աղմուկի մակարդակի գերազանցումը կառավարվում է աշխատանքային ժամերի				

		կրճատումով				
Earth works, dumping Հողագործություն, աղբանետում	36.	Լանջերը կայուն են և չքայքայվող				
Հողագործություն, աղբանետում	37.	Պեղումներից և կույտերից առաջացած մնացորդների արտահոսքերը չեն խառնվում ջրային ռեսուրսներին				

* Ազդեցության մեղմացման բոլոր չափանիշները

1. Շատ լավ
2. Լավ
3. Արդարացի
4. Վատ
5. Շատ վատ

Attachments

(Օր. Լուսանկարներ, դիտողություններ և այլն)

Հավելված Ա. ՕԳ միջանցքում և շինհրապարակներում իրականացված կենսաբազմազանության հետազոտության հաշվետվություն

Հայցվող տարածքների *Ֆլորայի և ֆաունայի* հետազոտումը կատարել է գրասենյակային հետազոտության և երթուղային, դաշտային աշխատանքների մեթոդներով: Գրասենյակային աշխատանքի փուլում ուսումնասիրվել է առկա հրատարակված նյութերը տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ, կազմվել են բնորոշ *բուսական և կենդանական աշխարհի* ներկայացուցիչների ցուցակները, ճշտվել է նրանց ապրելավայրերի, կենսակերպի առանձնահատկությունները և ճշտվել է նրանց արտաքին նկարագրությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձրվել ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներին, որոնք հնարավոր է, որ գտնվում են Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի շինարարության տարածաշրջանում: Դաշտային աշխատանքների փուլում մասնագետները այցելել են տարածաշրջան և անցել ՕԳ-եր ծրագրի միջանցքով, կատարել դիտարկումներ և լուսանկարահանում, բույսերի նմուշների հավաքում և հերբարիացում: Այնուհետև հավաքած հերբարիումային և այլ նյութերը հետազոտվել են լաբորատոր պայմաններում: Բույսերի տեսակները որոշելիս, օգտագործվում են «Հայաստանի Ֆլորա» (1 – 11 հատորներ, 1954-2010թթ.) աշխատությունը և այլ գրական աղբյուրներ:

1. Ընդհանուր տեղեկություններ տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ

Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, որտեղ լանդշաֆտները և *էկոհամակարգերը* կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի *Ֆլորայի և ֆաունայի* հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով, հետևաբար, և իր մասնագիտացված դերով:

Հայաստանում ձևավորված 10 լանդշաֆտակլիմայական գոտիներին բնորոշ պայմանները նպաստել են բուսական ու կենդանական տեսակների բնակության միջավայրերի մեծ բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են՝ ինքնատիպ համակեցություններ, էնդեմիզմի բարձր մակարդակ և հարուստ ագրոկենսաբազմազանություն: Կենսաբազմազանության տեսակային կազմի

առատությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է տարածաշրջանի *բուսական և կենդանական աշխարհների* ձևավորման կարևոր մարզերի հանգուցակետում, ինչպես նաև հանդիսանում է միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ: Արդյունքում՝ երկրի ոչ մեծ տարածքում (մոտ 30 հազ.կմ²) աճում են շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսեր, 428՝ հողային և ջրային ջրիմուռներ, 399՝ մամուռներ, 4207՝ սնկեր, 464՝ քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակի անողնաշար կենդանիներ:

Հայաստանի կենսաբազմազանությունն աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով. մոտ 500 կենդանատեսակ՝ (Ֆաունայի շուրջ 3 %-ը) և 144 բուսատեսակ (Ֆլորայի 3.8 %-ը) համարվում են Հայաստանի *էնդեմիկներ*: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 կմ² տարածքում աճում է մոտ 107 տեսակ:

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի շինարարության համար տարածքը գտնվում է Կովկասյան բուսական նահանգի Իջևանի ֆլորիստիկ շրջանում: Իջևանի ֆլորիստիկ շրջանը գրավում է Տավուշի մարզը ամբողջությամբ և Լոռու մարզի արևելյան մասը: *Բուսական աշխարհը* այստեղ առաջացնում է փակ անտառներ, նոստանտառներ, գետերի հունների երկարությամբ՝ հունամերձ անտառաշերտ, տափաստաններ և մարգագետիններ: Իջևանի Ֆլորիստիկ շրջանին բնորոշ է ուղղաձիգ գոտիականության համարյա բոլոր գոտիները: Ֆլորիստիկ շրջանում է Հայաստանի ամենացածրադիր կետը՝ 400 մ ծ.մ. Դեբեդի հովտում՝ Վրաստանի հետ սահմանագծում, իսկ ամենաբարձրադիր կետը Թեժ լեռնագագաթն է՝ 3101 մ ծ.մ.: Ֆիզիկաաշխարհագրական շրջանացման դիտանկյունից Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի տարածաշրջանը համընկնում է Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների Դեբեդ- Աղստև ենթանահանգի Գուգարքի շրջանի Դեբեդի ձորի ենթաշրջանի հետ: Օգ-երի միջանցքը անցնում է հետանտառային՝ ցածր անտառային /400- 1000 մ/ և անտառային՝ ցածր և միջին /800-2300/ լեռնային բնական վերնթաց լանդշաֆտային գոտիներով:

Իջևանի ֆլորիստիկ շրջանում հայտնաբերված է 1280 տեսակի բարձրակարգ բույսեր, որից 19-ը *էնդեմիկ* է, 71 տեսակ գրանցված է ՀՀ բույսերի Կարմիր գրքում, որից Դեբեդի կիրճում և հարակից տարաշածրջանում հնարավոր է հանդիպել 22 բուսատեսակ և *կենդանական աշխարհի* 21 տեսակ:

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երը ընթացքում հատում են բնական բուսածածկերի երեք գոտի. ա/ հացազգի-տարախոտային տափաստանային բուսածածկ, որոնք երկարատև մշակության արդյունքում կորցրել են իրենց բնական բուսածածկը, /Ակների, Հաղպատի, Մեծ և Փոքր Այրումների ու Ճոճկանի սարահարթերը/, բ/ սաղարթավոր խառը

մասնակցությամբ քսերոֆիլ նոսրանտառային բուսածածկ /Հաղպատից հետո Դեբեդի կիրճում/, գ/ հունամերձ անտառային բուսածածկ /Դեբեդ գետի ափերին/:

2. Տարախոտային տափաստանային բուսականություն

Լեռնային տափաստանները Հայաստանի բուսական ծածկույթի ամենատարածված և բնորոշ լադաֆտային տիպերից են, որոնք զբաղեցնում են 1200-2000 մ, իսկ առանձին դեպքերում՝ 500 – 2700 մ բարձրությունները: Հայաստանում, ի տարբերություն հարթավայրային երկրների, տափաստանային բուսականությունը խիստ բազմազան է և բաժանվում է բազմաթիվ ենթատիպերի, որոնցից ըստ բուսածածկի կարելի է առանձնացնել կծմախոտային, շյուղախոտային, փետրախոտային, սեզային, բոշխային, օշինդրային, տարախոտային, հացազգի-տարախոտային, տրագականտային /բարձիկային բուսականություն՝ հիմնականում՝ գազեր/ և այլն: Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի միջանցքի սարահարթերը պատկանում են հացազգի-տարախոտային տափաստանային ենթատիպին:

Տափաստանային բուսական համակեցությունների մեջ զգալի մաս են կազմում վաղամեռ /Էֆեմեր/ բուսատեսակները, որոնց մեջ կան նաև ճիմ առաջացնող հացազգիների՝ անապատասեզի, ցորնուկի, այծակնի, դաշտավլուկի տեսակներ: Գարնանը տափաստանները փարթամ տեսք ունեն շնորհիվ էֆեմերների, որոնք ծաղկում են վաղ գարնանից սկսած: Տարածված են առնասպարը, ճոճուկը, կակաչները, սագասոխուկը, պապլորը, աստղաշուշանը և այլն: Ամռան շոգերի հետ սրանք չորանում են ասպարեզը թողնելով չորադիմացկուն բուսականությանը, որոնք հիմնականում հացազգիների ներկայացուցիչներ են:

Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երը հիմնականում անցնում են սարահարթներով, որոնք երկար տարիներ մշակվել են կամ արածեցվել: Արդյունքում այդ տեղամասերում բնական բուսական համակեցությունները դեգրադացվել են և խիստ աղքատացել: Բուսական համակեցության կազմում ավելացել են նոր ներկայացուցիչներ, որոնց մոլախոտեր ենք անվանում:

Գրասենյակային հետազոտության արդյունքներով նշված տեղամասերում բնորոշ բուսականությունը կազմում են.

- 1.Շյուղախոտ /*Festuca valesiaca* Gaudin/.
- 2.Շյուղախոտ ոչխարի /*Festuca ovina* L/.
- 3.Բարակոտնուկ, կելերիա՝ երկու տեսակ /*Koeleria albobiv* Domin, *Koeleria cristate* Pers./.
- 4.Կծմախոտ /*Bothriochola Ischaemum* Keng/.
- 5.Փետրախոտ՝ երեք տեսակ /*Stipa capillata* L, *Stipa lessingiane* Trin, *Stipa Tirse* Stev/.
- 6.Մակարդակախոտ /*Galium verum* I./.
- 7.Սեզ, չայիր /*Agropuron*/.

- 8.Քոսքսուկ տարբեր տեսակներ /Scabiosa/.
- 9.Բերենիկե /Veronica/ երկու տեսակ՝ պարսկական և բազմաբաժան.
- 10.Օշինդրներ /Artemisie/.
- 11.Հազարտերևուկ ասպիրակի /Achiellea filipindulina/.
- 12.Գագ նապաստակապոչ /Astragalus lagopoides/.
- 13.Ոգնագլխիկ անդրկովկասյան /Echinopos transcaucasicus/.
- 14.Տուղտավարդ թավրիզյան /Alcea tabrisiana/.
- 15.Սապոնարմատ երկգույն /Gipsophila bicolor/.
- 16.Կորնգան եղջրավոր /Onobzuchis cornuta/ բարձիկանման խիտ թուփ է մուգ վարդագույն թիթեռնիկաձաղիկով.
- 17.Հիրիկ տարօրինակ /Iris paradoxa/ Մուգ մանուշակագույն ծաղիկներով արտաքին թավշե մուգ մանուշակագույն ծաղկաթերթիկներով վարդագույն ազդականչային բծերով իշամեղուներին գայթակղելու համար.
18. Հիրիկ կովկասյան /Iris caucasica/ դեղին, եռակողմ ծաղիկներով.
- 19.Հիրիկ թզուկային /Iris pumila/.
20. Փետրաագրխտուկ մանրափետրավոր /Stripagrostis plumosa/.
- 21.Տերեփուկ կապույտ /Centaurea cyanus/ մոլախոտ է.
22. Դլփնյակ արևելյան /Consolida orentalis/ մոլախոտ, համատարած ծաղկում է մանուշակագույն գորգ կազմելով մշակովի դաշտերում.
23. Տերեփուկ բազմատիկատերև /Centaurea polyodiifolida/ դեղին ծաղիկներով.
24. Բոխի, պեքի, ձիասամիթ /Prangos uloptera/ թարմ ընձյուղները օգտագործվում է սննդի մեջ:

3. Սաղարթավոր խառը մասնակցությամբ քսերոֆիլ նոսրանտառային բուսածածկ

Քսերոֆիլ /չորասեր/ նոսրանտառները տարածված են կմախքային, քարքարոտ թեք լանջերին ու ձորակներում՝ ծ. մ. 700-2200 մ բարձրություններում: Դրանք ոչ բարձր ծառերի ու թփերի և չորասեր-լուսասեր խոտաբույսերի բուսական համակեցություն են: Հաղպատի սարահարթից հետո Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երը, սկսած Հաղպատի սարահարթի հյուսիսային եզրագծից, /հիմնական հենասյուներ AP-12 - AP-22 –I միջակայքը/ մոտովրապես 4.6 կմ երկարությամբ անցնում են Դեբեդի կիրճի աջակողմյան հատվածով, որտեղ սաղարթավոր նոսրանտառի ենթատիպն է: Այս միջակայքում հանդիպում են և՛ սաղարթավոր անտառին բնորոշ բուսական համակեցություն, և՛ չորադիմացկուն բուսական համակեցություն, որը բնորոշ է ՀՀ հյուսիսային կողմի ցածրադիր քսերոֆիլ նոսրանտառներին: Սաղարթավոր նոսրանտառին բնորոշ բուսական համակեցությունները կազմված են ցաքու, ասպիրակի, փռշնու, ցախակեռասների, դժնիկի, հասմիկի /սրնգենու/, վրացական

թխկու բուսուտներից: Հանդիպում են խնկենին /պիստակենի/ և դրախտածառը: Սաղարթավոր նոսրանտառի առաջին շարահարկը կազմում են ֆրիգանտային խոտաբույսերը՝ գազերը, փետրախոտերը, շյուղախոտերը, աբեղախոտերը, և այլն: Քսերոֆիլ նոսրանտառների ենթատիպ է ասեղնատերև նոսրանտառները կամ գիհուտները: Հայաստանում հանդիպող գիհիները /գարշահոտ, ցածրած, երկարաթև և պտղակոթավոր/ երկարակյաց և դանդաղած, դիմացկուն բնափայտով ծառաթփատեսակներ են, որոնք հարմարվել են չոր, ցամաքային կլիմային աղքատ, քարքարոտ կմախքային հողերին: Այս իմաստով շատ էական է գիհու նոսրանտառի հակաեռոզիոն նշանակությունը: Պակաս կարևոր չէ կենսոլորտը մանրեագերծելու գիհու նոսրանտառի նշանակությունը:

Դեբեդի կիրճի աջակողմյան նոսրանտառում, որտեղից անցնում է Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի միջանցքը, հանդիպում են փակ անտառներին բնորոշ Կաղնի վրացական /*Quercus iberica*/, Կաղնի խոշորառեղ /*Quercus maerantha*/, Թխկի վրացական /*Acer iberica*/, Բոխի արևելյան կամ Ղաժի /*Carpinus orientalis*/: Իսկ չորասեր նոսրանտառ են առաջացնում հիմնականում հետևյալ բույսերը.

1. Ցաքի կամ ժանտափուշ /*Paliurus spina-christi* Mill/, փշոտ թուփ է, լայնեզր գլխարկի նման սերմերով.
2. Ասպիրակ աղեղնաեզր /*Spiraca crenata*/, կարճահասակ թուփ է սպիտակ ծաղիկներով.
3. Նշենի Ֆենցլի /*Amygdalus fenzliana*/, թուփ, մշակովի նուշի վայրի ցեղակիցը.
4. Ճապկի հարավային /*Swida australis*/, թուփ կամ ծառ.
5. Սզնի հայկական /*Crataegus armena*/, թուփ կամ ծառ, կարմիր պտուղներով.
6. Սզնի Մեյերի /*Crataegus Meyeri*/, թուփ կամ ծառ վառ կարմիր պտուղներով.
7. Սզնի արևելյան /*Crataegus Orientalis*/, թուփ կամ ծառ նարնջագույն պտուղներով.
8. Սզնի Սյուզանկլեյմի /*Crataegus Susanykleinae*/, էնդեմիկ է, ծառանման.
9. Զմենի անդրկովկասյան /*Cotoneaster Transcaucasica*/, թուփ կարճահասակ, օգտագործվու է ցախավել պատրաստելու համար.
10. Փոշնի կովկասյան /*Celtis caucasica*/, հաստաբուն ծառ, աճում է միայնակ կամ փոքր խմբերով, դեղին, ամուր բնափայտ ունի.
11. Պիստակենի բթատերև /*Pistacia mutica*/, խնկի ծառ, մշակվող պիստակենու վայրի տեսակը.
12. Տանձենի ուռատերև /*Purus salicifolia*/, նեղ, արծաթագույն տերևներով.
13. Կծոխուր սովորական /*Berberis vulgaris*/, թուփ փշոտ, կարմիր պտուղներով, դեղին ծաղիկները օգտագործել են թել ներկելու համար.

14. Կծոխոր ամբողջաեզր /*Berberis integerrima*/, թուփ փշոտ, կարմիր պտուղներով, դեղին ծաղիկները օգտագործել են թել ներկելու համար.
15. Բալենի ալեհեր /*Cerasus incana*/, ցածր ծառ կամ թուփ, հաճախ օգտագործվում է որպես պատվաստակալ մշակվող բալենու համար,
16. Բալենի մանրապտուղ /*Cerasus microcarpa*/.
17. Էֆեդրիա ժայռային /*Ephedra procera*/, սարի չամիչ, թուփ է, աճում է քարքարոտ տեղամասերում, ժայռերի ճեղքերում, դեղին կամ նարնջագույն պտուղներ ունի չամիչի համով.
18. Շրջահյուս հունական /*Periploca graeca*/, լիանա է.
19. Լոշտակ սպիտակ փաթաթվող դեղաբույս է, անվանում են „Հայկական ժենշեն,,.
20. Ալոխրուզա տարագույն /*Allocrusa versicolor*/, կիսաթուփ է.
21. Վարդակակաչ Յուլիայի /*Tulipa Julia*/, ամենատարածված վայրի վարդակակաչը, գեղազարդ բույս է.
22. Կտավատ կամ Վուշ /*Linum hipericifolium*/ սրճուկազատերն, բաց մանուշակագույն կամ երկնագույն ծաղիկներով գեղազարդ բույս է.
23. Կորնգան ճառագայթավոր /*Onobrychis radiata*/.
24. Ոգնաթուփ Թախտաջանի /*Acantholomon Takhtajani*/.
25. Սրնգենի սովորական /*Ligustrum vulgais*/, թուփ, հասուն պտուղները սև ուլունքանման են.
26. Ոգնագլխիկ անդրկովկասյան /*Echinops transcasicus*/.
27. Հազարատերևուկ ասպիրակի /*Achillea filipendulina*/.
28. Փետրաագրոխոտուկ մանրափետրավոր /*Stipagrostis Plumosa*/, բազմամյա խիստ մազմզոտ խոտաբույս է.
29. Կտավատ կամ Վուշ ավստրիական /*Linum austriacum*/, երկնագույն ծաղիկներով, մանրիկ տերևներով բազմաճյուղ բույս է.
30. Սոխ կեղծ դեղին /*Allium pseudoflavium*/, սոխ սրտանման առեջավոր /*Allium caridiostemon*/, ոսխ մուգ մանուշակագույն /*Allium atroviolaceum*/.
31. Եղբայրարյուն Տուրնեֆորի /*Phelypaea tournefortii*/, մակաբույծ բույս է մեկական վառ արնակարմիր ծաղկով ցողունի վրա.
32. Թանթոնիկ սպիտակ /*Sedum Album*/, թանթոնիկ կովկասյան /*Sedum caucasicum*/.
33. Փշամանդրիկ փշավոր /*Atraphaxis spinosa*/, սերմերը մանուշակագույն թիթեղիկներ են.
34. Երկնափուփուկ գեղեցկագույն /*Atheopappus pulcherimus*/.
- 35 Մեխակ արևելյան /*Dianthus orientalis*/.

36. Անթառամ կարմրավուն /*Helichrysum rubicundum*/.
37. Դժնիկ Պալասի /*Rhamnus pallasii*/, թուփ է, ցածրահասակ, փշանման ճյուղերով, սև ուլունքանման պտուղներով:

4. Հունամերձ անտառների բուսականություն

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի միջանցքին զուգահեռ Դեբեդի հունի երկարությամբ ձևավորվել է հունամերձ անտառային էկոլոգիական համակարգը, որի բուսատեսակների տեսակային կազմը տարբերվում է փակ անտառների տեսակային կազմից: Դեբեդի հունամերձ անտառում հանդիպող առավել բնորոշ ծառերը, թփերը և խոտաբույսերն են.

1. Փշատենի նեղատերև /*Elaeagnus angustifolia*/
2. Մամրիչ արևելյան /*Clematis orientalis*/
3. Կարմրան ճյուղառատ /*Tamarix ramosissima*/
4. Զիչխան դժնիկանման /*Hippophae rhamnoides*/
5. Ուռենի եռառեղ /*Salix triandra*/
6. Ուռենի էլբրուսյան /*Salix elbursensis*/
7. Այծուռենի /*salix caprea*/
8. Մորենի քարոտ /*Bubus saxatilis*/
9. Ապուզան թավոտ /*Epilobium hirsutum*/
10. Շնախոտ սուր /*Cunanchum acutum*/
11. Կեղծ փիփերթ /*Malva sylvestris*/
12. Դաղձ երկարատերև /*Mentha longifolia*/
13. Տմնտաշ օղակավոր /*Lysimachina verticillaris*/
14. Կերոն դոմինիկյան /*Typha domingensis*/

5. Վայրի օգտակար բույսեր, դեղաբույսեր և ուտելի բույսեր

Դեբեդ գետի ստորին հոսանքի տարածաշրջանը հարուստ է բույսերով, որոնք կիրառություն են գտել որպես դեղաբույսեր, օգտագործվում են մարդկանց կողմից սննդի մեջ /անմշակ կամ մշակված՝ թթու դրած, եփած, տապակած, մուրաբա պատրաստելու, որպես համեմունք/ կամ ունեն տեխնիկական նշանակություն: Տարածաշրջանի անտառներում հանդիպում են վայրի տարբեր տեսակի պտղատու ծառեր /հոնի, տանձենի, խնձորենի, ընկուզենի/, հատապտուղներից՝ մոշ, մորի: Ստորև ներկայացնում ենք օգտակար բույսերի, դեղաբույսերի և ուտելի բույսերի տարածաշրջանին բնորոշ տեսակները.

1. Հոն սովորական /*Cornus mas*/.
2. Խնկաձաղիկ սովորական /*Origanum vulgare*/.

3. Գետնամորի անտառային /*Fragaria vesca*/.
4. Արջընկույզ սովորական /*Dauga stramonium*/.
5. Աղտոր դաբադային /*Rhus coriaria*/.
6. Ազնվամորի սովորական /*Rubus idaeus*/.
7. Նոնենի սովորական /*Punica granatum*/.
8. Ընկուզենի հունական /*Juglans regia*/.
9. Թխենի սովորական /*Padus racemosa*/:

Այս բույսերից բացի տարածաշրջանում հանդիպում են նաև այնպիսի բույսեր, որոնք լայնորեն տարածված են Հայաստանի բոլոր տարածաշրջաններում:

1. Բանգի սև /*Hyoscyamus niger*/.
2. Եղինջ երկտուն /*Urtica dioica*/.
3. Խատուտիկ դեղատու /*Taraxacum officinalis*/.
4. Ճարճատուկ սովորական /*Cichorium intybus*/.
5. Սրոհունդ խոցված /*Hypericum perforatum*/.
6. Ուրց Կոչիի /*Thymus Kotschyanus*/.
7. Օշինդր դառը /*Artemisia absinthium*/.
8. Ավելուկ գանգուր /*Rumex crispus*/.
10. Դանդուռ բանջարանոցաբուստանային /*Portulaca oleraceae*/.
11. Մոշենի թխակապույտ /*Rubus caesius*/.
12. Սիբեի սովորական /*Falcaria vulgaris*/.
13. Փիփերթ արհամարված /*Malva neglecta*/:

6. Դեբեդի ստորին հոսանքի տարածաշրջանի կենդանական աշխարհը

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի ծրագծի միջանցքը հատում է երեք լադաֆտային գոտի՝ ռելիեֆի ուրույն տարատեսակով, որտեղ առաջացել են բնական բուսածածկի երեք գոտի և համապատասխանաբար երեք էկոհամակարգ: ՕԳ-երի ծրագիծը սկսվելով Ալավերդի-Ակներ-Հաղպատ սարահարթային տեղանքից, անցնում է Դեբեդի կիրճի աջ ափի նոստանտառի միջով, ապա հատելով Դեբեդը /երկու անգամ/՝ շարունակվում է ուղին սարահարթը զբաղեցնող մշակվող դաշտերի միջով և հասնում է վերջնակետին: Ընդ որում Ալավերդի -2 ենթակայանի, որտեղից սկսվում է ՕԳ-երի ծրագիծը, բարձրությունը ծովի մակարդակից 940 մ է, իսկ Նոյեմբերյան ենթակայանի, որը ՕԳ-երի վերջնակետն է, բարձրությունը ծովի մակարդակից 500 մ է: Այսպիսով ծրագծի անկումը կազմում է 460 մ: Այս հանգամանքը առաջացնում է բնական պայմանների զգալի փոփոխություն, որը արտահայտվում է էկոհամակարգերի և նրա մաս կազմող կենդանական աշխարհի տեսակային կազմի վրա: Դեբեդի ստորին հոսանքի տարածաշրջանի կենդանական աշխարհի բազմազանությունը պայմանավորված է

տարածաշրջանի ռելիեֆի տարատեսակությամբ: Իրար հարևանությամբ են գտնվում Վիրահայոց և Գուգարաց լեռնաշղթաների անտառապատ գագաթները, բնակեցված, հիմնականում մշակվող սարահարթերը, Դեբեդի կիրճի քարքարոտ ափերը և գետի ջրային տարածքները: Այս պատճառով հնարավոր է ո՛չ միայն տարբեր էկոհամակարգերում ապրող կենդանական աշխարհի ներկայացուցիչների փոխադարձ ներթափանցումը միմյանց կենսաբանական արեալ, այլև առանձին փոքրիկ միկրոէկոհամակարգերի առաջացումը հիմնական էկոհամակարգի մեջ:

Դաշտային ուսումնասիրությունների արդյունքում սարահարթային ռելիեֆում հայտնաբերվել է սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, սովորական լորտու: Դեբեդի կիրճի քարքարոտ լանջերին դիտարկվել են ժայռային մողես, քարակզաքիս, աղվես, սկյուռ: Այստեղ նկատելի են աքիսի, քարակզաքիսի կենսագործունեության հետքերը: Նեղոց գյուղի այգիներից վեր դիտարկվել է ոզնի: Չի բացառվում գայլի և այլ անտառաբնակ կենդանիների մուտքը Դեբեդի ստորին հոսանքի տարածաշրջան:

Ճոճկանի սարահարթում հայտնաբերվել է նապաստակների կենսագործունեության հետքեր: Բնակիչների հավաստմամբ տարածաշրջանում կա շնագայլ, որոնց ոռնոցը լսվում է գիշերային ժամերին: Դեբեդ գետի ջրային տարածքներում, Քարկոփ գյուղի շրջանում դիտարկվել է լճագորտ, ջրային լորտու: Չնայած Դեբեդի ջրերի ակնհայտ աղտոտվածությանը նկատելի է այս կենդանիների համար կերի առկայությանը գետի ջրային տարածքում և ափերին: Գրականության տվյալների համաձայն առավել բազմազան է Դեբեդի վտակների վերին հոսանքների կեսաբազմազանությունը: Ձկներ՝ կարմրախայտ, կովկասյան թեփուղ, քուռի նեղիրան ենթաբերան, քուռի բեղլու և քուռի կողակ: Զոոբենթոսի ներկայացուցիչներից այստեղ հանդիպում են ինչպես մեգաբենթոսի, այնպես էլ մակրոբենթոսի ներկայացուցիչներ՝ սակավախոզան որդեր, տզրուկներ, ճպուռներ, միօրիկներ և այլն: Ֆիտոպլանկտոնն ու գոբրենթոսի ներկայացուցիչներն այստեղ սակավ են, քանի որ այս գետերը արագահոս են:

Թռչուններից դիտարկվել է մոխրագույն ագռավը, տնային ճնճղուկը, թխակապույտ աղավնին, վայրի բաղը՝ Դեբեդի ափին, գորշ կաքավը և փայտփորիկը, խաճկտիկը՝ Դեբեդի կիրճում, արտույտ, լորը, երաշտահավերը՝ սարահարթերում, փետրավոր գիշատիչներից՝ բուն, բվեճը, մորաճուռակ և այլն: Դեբեդի հովիտը, հաշվի առնելով տաք կլիման, կարող է միգրացիոն ուղի և ժամանակավոր ապաստան հանդիսանալ որոշ ջրլող թռչունների համար վաղ գարնանային ամիսներին:

Շատ են միջատները (մրջյուններ, մորեխներ, ծղրիդներ, ճանճեր, ճթթաններ և այլն):

7. Տարածաշրջանում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բույսերի հավանականությունը

Գրասենյակային հետազոտության արդյունքում հավանական է համարվել ստորև ներկայացված աղյուսակի ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների առկայությունը Դեբեդի ստորին հոսանքի տարածաշրջանում:

Դաշտային աշխատանքների փուլում Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի կառուցվող ծրագծի միջանցքում և հենասյուների տեղադրման շրջակայքում /15x15 մ/ չի հայտնաբերվել ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ:

8. Տարածաշրջանում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների հավանականությունը

Գրասենյակային հետազոտության արդյունքում հավանական է համարվել ստորև ներկայացված աղյուսակի ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների առկայությունը Դեբեդի ստորին հոսանքի տարածաշրջանում:

Դաշտային աշխատանքների փուլում Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի կառուցվող ծրագծի միջանցքում և հենասյուների տեղադրման շրջակայքում /15x15 մ/ չի հայտնաբերվել ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված որևէ կենդանի, նրանց բներ կամ կենսագործունեության արգասիքներ, այդ թվում՝ *կենդանիների միգրացիայի ուղիներ*:



ՀԱՎԵԼՎԱԾ Բ – Հանրային լուսմների արդյունքները

Նախագծման փուլում ազդակիր համայնքների հետ խորհրդատվությունը և համապատասխանությունը զարգացման պլանների հետ

Լուսմների ամփոփում

Նախագծման փուլում, ԲԷՑ-ը Կապալառուի և Խորհրդատուի հետ միասին տեղի համայնքի ղեկավարների հետ կազմակերպել են խորհրդատվական հանդիպումներ զարգացման ծրագրերի հետ համապատասխանության, բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ առաջարկվող մեղմող միջոցառումների վերաբերյալ: Հանդիպումների ամփոփ նկարագիրը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Խորհրդակցություն ազդակիր համայնքների հետ նախագծման փուլում

N	ԱՄՍԱԹԻՎ	ԱՌԱՐԿԱՆ	ՎԱՅՐԸ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
1.	20.01.2017	Նախագծի շնորհանդեսը երթուղու ընթացքը	Ալավերդու քաղաքապետարանը	ԲԷՑ-ը, ՇԿ-ն , Կապալառուն, Ալավերդու վարչակազմը և ազդակիր համայնքների ղեկավարները
2.	14.02.2013	Ծրագրի ներկայացման և նախնական գնահատման կիրառումը	Հաղպատի քաղաքապետարանը	ԲԷՑ-ը, ՇԿ-ն, Կապալառուն, Հաղպատ համայնքի պատգամավորները
3.	21.03.2013	ՇՄՍԱԳ-ի նախագծային տարբերակների ներկայացում	Ալավերդու քաղաքապետարանը	ԲԷՑ-ը, ՇԿ-ն, Կապալառուն, Ալավերդու վարչակազմը, տեղական ներկայացուցիչները և ՀԿ-ները

Հանդիպումներին մասնակցեցին համայնքի ղեկավարները և նրանք տրամադրեցին կարևոր տեղեկություններ, գծերի վերջնական ուղին որոշելիս հաշվի առնելու համար: Նախագծող թիմը հաշվի առավ զարգացման պլանի հետ անհամապատասխանության դիտողությունները և կատարեց համապատասխան փոփոխություններ: Ավելին, բոլոր համայնքների հանդիպումներից հետո պաշտոնական նամակներ ստացվեցին:

Բոլոր հասարակական լուսմներին ակտիվ մասնակցել են համայնքի ղեկավարները: ՀԿ-ները եւ ՋԼՄ-ների ներկայացուցիչները մասնակցել են միայն վերջին լուսմներին՝ Ալավերդիում:

Կապալառուի բնապահպանական մասով թիմը ԲԷՑ և ԻԱԽ-ի փորձագետների եւ ինժեներների հետ միասին պատասխանեցին բոլոր հարցերին եւ կատարեցին անհրաժեշտ փոփոխություններ տեղական ՇՄՍԱԳ զեկույցում եւ ԲԿՊ -ում:

Լուսմների ժամանակ հնչեցված հիմնական հարցերն ամփոփված են ստորև բերված աղյուսակում:

Ըստ մեկնաբանության	Մեկնաբանություն	Պատասխան
Արհուս կենտրոնը, ՀԿ-ի Լուռու գլխավոր վարչությունը	Ինչպիսի՞ ազդեցություն կունենա ծրագիրը և ինչպե՞ս այն մեղմացնել:	Կներկայացվել մի քանի ազդեցություններ և որոշ օրինակներ թե ինչպես է հողը հեռացվում և վերամշակվում տեղական օրենսդրության եւ միջազգային լավագույն փորձին եւ չափանիշներին համապատասխան:
Արհուս կենտրոնը, ՀԿ-ի Լուռու գլխավոր վարչությունը	Ի՞նչ է կատարվելու շինարարական աղբի հետ:	Շինարարության կապալառուն պարտավոր է հավաքել և տնօրինել աղբը համաձայն տեղական օրենսդրության և պետք է համաձայնեցնի աղբի տեղափոխման վայրը տեղի համայնքների ներկայացուցիչների հետ: Բացի այդ մեծ քարերը, որոնք ի հայտ են գալիս պեղումների ժամանակ կարող են օգտագործվել նաև որպես ձեռք բերված տարածքի աշտարակների պաշտպանիչ պատի մի մաս:
Հաղպատ համայնքի ներկայացուցիչները	Ինչպե՞ս պետք է ընթանա հին գծերի շահագործումից հանելու գործընթացը:	Հին գիծը շահագործումից հանելու մաս չի կազմում այս ծրագիրը : Այն նախատեսվում է անել հետագայում:
Նեղոց համայնքի ներկայացուցիչները	Ինչպե՞ս պետք է արվեն նախագծի փոխհատուցումները:	Փոխհատուցումները պետք է կատարվեն համաձայն գործող Տարաբնակեցման Քաղաքականության շրջանակների և հետագա Վերաբնակեցման գործողությունների ծրագրերի հիման վրա, որոնք այժմ մշակման փուլում են:

Նիստերի եւ մասնակիցների ցուցակը տրամադրված է ստորև

**«ԷԼԵԿՏՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ (III փուլ)
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ծրագրային տարածքը: (ՀՀ Լոռու մարզի Ալավերդի, Ճոճկան, Հաղպատ, Մեծ Այրում,
Նեղոց, ՀՀ Տավուշի Այրում համայնքները)

Հանդիպման վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի (քաղաքապետարան)

Ամսաթիվ՝ 21 մարտ, 2017 թ., ժամը 14:00

Հանդիպման նպատակն էր, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի ներքո «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը» շահառու և ազդակիր հանրությունը տեղեկացումը և հանրային քննարկումների կազմակերպումը:

Հանդիպման մասնակիցների ցանկը ներկայացված է Հավելված 1-ում:

Օրակարգ

Նիստը բացեց «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի ղեկավար՝ Արամ Պետրոսյանը: Նա ողջունեց հանդիպման մասնակիցներին և ծանոթացրեց հանդիպման օրակարգին՝ խոսելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գործունեության, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի մասին և ներկայացրեց հանրային քննարկումների նպատակը:

Այնուհետև Ծրագրի խորհրդատու ընկերության բնապահպանության գծով փորձագետ/Միքայել Թևոսյանը ներկայացրեց «էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Ծրագրի գործունեության մասին խոսեց նաև «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի համակարգող Ռոբերտ Առաքելյանը:

ՀՀ գիղ ասոցացիայի անդամ Սոնա Աբրահամյանին հուզում էր «թե որքան է լինելու գծի երկարությունը, որտեղից է սկսվելու և որտեղ ավարտվելու»:

Հարցին պատասխանեց Արամ Պետրոսյանը «Գծի երկարությունը լինելու է 25 կմ, որը դուրս է գալիս «Ալավերդի-2» 220/110/35կՎ ենթակայանից և հասնում է մինչև Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» 110/35կՎ ենթակայան»:

Ալավերդու Օրիոս կենտրոնի տնօրեն Անուշ Էվոյանին հնչեցրեց հետևյալ հարցը «Նախատեսվող գործունեությունը ի՞նչ ազդեցություն կթողնի շրջակա միջավայրի վրա»:

Հարցին պատասխանեց Միքայել Թևոսյանը «Որպես օրինակ՝ հողի բերրի շերտը հանելու դեպքում այն պահվելու է, իսկ ծրագրի ավարտից հետո կատարվելու է հետլիցք»:

Անուշ Էվոյանին հուզում էր «թե ինչ է արվելու շին. աղբի հետ»:

Հարցին պատասխանեց Միքայել Թևոսյանը «մեծ բարերը կլինեն որպես պաշտպանիչ շերտ հենարանների համար կամ համայնքի հետ համապատասխանեցնելով կտեղափոխվեն համապատասխան վայր»:

Այնուհետև շարունակեց «թե ինչպես է լինելու հողերի օտարման և դրանց նշանակության փոփոխման գործընթացը»:

Պատասխանեց Ռոբերտ Առաքելյանը «միայն օտարվելու է հողանջատված անհրաժեշտ հատվածը և փոխելով վերջինիս նպատակային նշանակությունը դեպի էներգետիկ կատեգորիա, իսկ մնացած չօտարված հատվածը՝ չի ենթարկվի հողի նպատակային նշանակության փոփոխության»:

Մասնակիցներին հուզում էր նաև «որքա՞ն է տևելու ծրագիրը»:

Հարցին պատասխանեց Արամ Պետրոսյանը «ծրագիրը նախատեսված է ավարտին հասցնել մինչ 2018թ.-ի հունիս ամիսը»

Նիստը ամփոփեց «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի ղեկավար՝ Արամ Պետրոսյանը:

22 Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար՝ Կարեն Փարեմովյան



«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի ղեկավար՝ Արամ Պետրոսյան



Խորհրդատու ընկերության բնապահպանության գծով փորձագետ՝ Միքայել Թևոսյան



Կապալառուի՝ ենթակապալառու «Ռեդիոնտ» ՓԲԸ ընկերության ներկայացուցիչ՝ Մեսրոպ Մեսրոպյան



«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ բնապահպան՝ Հասմիկ Խաչոյան /Արձանագրող/



Հանրային քննարկումների լուսանկարները



